

ԵՐԵՏԱՍԱՐԴ
ԵՐԱԺԵՏԱՎԵՏԻ
ԱՄԲՈՅ

ТРИБУНА
МОЛОДОГО
МУЗЫКОВЕДА

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ
ИМ. КОМИТАСА
МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ РА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԾԱԳԵՏՆԵՐԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐ

СТАТЬИ
МОЛОДЫХ МУЗЫКОВЕДОВ АРМЕНИИ

ՀՏԴ 78 (479.25)

ԳՄԴ 85.23 (2)

Հ - 247

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
գիտական խորհրդում
ՀՀ մշակույթի և երիտասարդության
հարցերի նախարարությունում

Կազմեց և խմբագրեց՝ արվեստագիտության դոկտոր Ս.Կ.Սարգսյան
Գրախոսներ՝ արվեստագիտության դոկտոր՝ Ա.Ա.Արևշատյան,
արվեստագիտության թեկնածուներ՝ Ա.Ա.Սարյան, Ի.Գ.Շիգրանովա

Составитель и редактор - доктор искусствоведения С.К.Саркисян

Рецензенты: доктор искусствоведения А.С.Аревшатян,
кандидат искусствоведения А.А.Сарьян, кандидат искусствоведения
И.Г.Тигранова

Սույն հրատարակությունում ներկայացված են հայ երիտասարդ երաժշտագետների ուսումնասիրություններին առնչվող հոդվածներ: Արձարձվող թեմաների շրջանակը ընդգրկում է և վկայում է նրանց ուսումնասիրությունների նախասիրությունների մասին միաժամանակ աղերսվում ազգային երաժշտագիտության ավանդույթների շարունակման ցանկությամբ: Դրատարակությունը նախատեսված է մասնագետների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են երաժշտական արվեստով:

В данном издании представлены исследовательские очерки армянских музыковедов молодого поколения. Круг избранных тем свидетельствует о широте и новизне интересов и, одновременно с тем, - о желании продолжить традиции национальной музыкальной науки и арменоведения в целом. Издание рассчитано на специалистов и всех, кто интересуется музыкой.

Հ- 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՑԱՍԱՐԴ ԵՐԱԾՏԱԳԵՏՆԵՐԻ ՀՈՂԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ (կազմեց և խմբագրեց Ս.Կ.Սարգսյան). Եր., «ԵՊԿ
հրատարակություն», 2007, - 164 էջ:
Сборник статей молодых музыковедов Армении. (Редактор-
составитель С.К.Саркисян), Еր.: Издательство ЕГК., 2006,-164 стр.

ԳՄԴ 85.23 (2)

ISBN 99941-998-1-1

© «ԵՊԿ հրատարակչություն», 2007թ.
© “Издательство ЕГК”, 2007

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածում ընդգրկում է երիտասարդ սերնդի հայ երաժշտագետների հոդվածներ: Թեմաների բազմազանությունը, որոնցից մի քանիսն առաջին անգամ են արձարձվում հայկական երաժշտագիտության մեջ, վկայում է նրանց ուսումնասիրությունների լայն նախասիրությունների մասին: Ազգային երաժշտագիտության հիմնախնդիրների ուսումնասիրություն համարակալում են ժամանակակից երաժշտության առանձնահատկությունների և օրինաչափությունների հետ, որոնք հաճախ պատճականորեն հիմնավորված են: Միաժամանակ, գիտատեխնիկական գիտելիքների ընդհանուր մակարդակը կողմնորոշեց վերլուծության նոր մեթոդաբանություններ, ինչպես նաև մոտեցումները վերանայելու անհրաժեշտությունը:

Ժողովածում հոդվածները դասավորված են երեք թեմատիկ բաժիններում: Առաջին բաժին՝ «Հայկական ավանդական երաժշտություն» որտեղ ներկայացված են Լիլիթ Թայանցյանի (ղեկ.՝ ԵՊԿ պրոֆեսոր Ա.Ա.Փահլևանյան), Դիանա Դանիելյանի (ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ ԱԻ առաջատար գիտ.աշխատող Կ.Է.Խուլարաշյան), Յասմիկ Ստեփանյանի հոդվածները (ղեկ.՝ պրոֆեսոր Ա.Ա.Արևշատյան): Երկրորդ բաժինը, որը կրում է «Հայկական ժամանակակից երաժշտություն»՝ ներկայացված են հիմնականում մենագրության տեսակի հոդվածներ. Վերա Զալյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ա.Ա.Սարյան), Մարինե Էրիզյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ժ.Պ.Չուրաբյան), Անահիտ Սեսրոյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ի.Գ.Շիգրանովա), Գայանե Սելրոնյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ա.Ա.Բարսամյան), Ռամիլա Ալավերդյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ս.Ա.Կոկժակ) և Յասմիկ Վարդանյանի հոդվածները (ղեկ.՝ պրոֆեսոր Ս.Կ.Սարգսյան), Երրորդ «Երաժշտական տեսություն և մեթոդիկա» բաժինը՝ բաղկացած է Աննա Խաչատրյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Զ.Զ.Տեր-Ղազարյան), Եվլա Խաչատրյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ս.Կ.Սարգսյան), Ինեսա Այվազովի (խորհրդատու՝ պրոֆեսոր Ս.Կ.Սարգսյան), Մարինա Սարգսյանի (ղեկ.՝ պրոֆեսոր Ս.Կ.Սարգսյան) և Սերգեյ Դայանի (ղեկ.՝ դոցենտ Լ.Ա.Մաթևոսյան) հոդվածները:

Ժողովածուն ավարտված էր 2002 թ. կեսերին, որի հետևանքով նրանուն հաշվի առնված չեն ավելի ուշ տարիների գիտական հրատարակումները: Այս փաստը չի ադրադառնում հրապարակումների մակարդակի վրա: Դույսով ենք, որ ժողովածուն կգրավի երաժշտների ուշադրությունը և, հմարավոր է նշանակություն ունենալ նոր նախաձեռնությունների համար:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ОТ РЕДАКТОРА-СОСТАВИТЕЛЯ

В данный сборник включены статьи армянских музыковедов молодого поколения. Разнообразие тем, некоторые из которых впервые разрабатываются в отечественном музыкознании, свидетельствует о широте интересов. Склонность к изучению проблем национальной музыки сочетается с познанием современной музыки – ее свойств и закономерностей, которые нередко исторически обусловлены. Вместе с тем, общий уровень научно-технических знаний определил появление новой методологии анализа, как и потребность переосмыслиния прежнего опыта.

Статьи сборника распределены в три тематических раздела. В первом разделе “Традиционная армянская музыка” представлены статьи Лилит Таланчян (рук. проф. ЕГК А.А.Пахлеванян), Дианы Даниелян (рук. ведущий научн. сотрудник ИИ НАН РА К.Э.Худабашян), Асмик Степанян (рук. проф. ЕГК А.С.Аревшатян). Во втором разделе “Современная армянская музыка” представлены, главным образом, монографического типа статьи Веры Залян (рук. проф. ЕГК А.А.Сарьян), Марины Экизян (рук. проф. ЕГК Ж.П.Зурбянян), Анаит Месропян (рук. проф. И.Г.Тигранова), Гаяне Мелконян (рук. проф. ЕГК А.А.Барсамян), Расмилы Алавердян (рук. проф. ЕГК М.А.Кокжаев) и Асмик Варданян (рук. проф. ЕГК С.К.Саркисян). Третий раздел – “Музыкальная теория и методика” составлен из статей Анны Хачатрян (рук. проф. ЕГК З.Г.Тер-Казарян), Евы Хачатрян (рук. проф. ЕГК С.К.Саркисян), Инессы Айвазовой (консультант проф. ЕГК С.К.Саркисян), Марины Саркисян (рук. проф. ЕГК С.К.Саркисян) и Сергея Даяна (рук. доц. ЕГК Л.А.Матевосян).

Составление сборника было завершено в первой половине 2002 г., вследствие чего в нем не учтены научные публикации более позднего времени. Данный факт никак не отражается на уровне публикаций. Мы надеемся, что сборник привлечет к себе внимание музыкантов и, возможно, сыграет роль для новых начинаний.

Светлана Саркисян

Դաշնական ավանդական երաժշտություն

Армянская традиционная музыка

ԴԻԱՎԱ ԴԱՏԻԵԼՅԱՆ

«ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ» ՍԻՐԱՎԵՊԻ ԶԱՎԱԽԵՑԱՆ ՏԱՐՐԵՐԱԿԻ ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՈՒՐՃ

Աշուղական արվեստը մշտապես եղել է բանասերների և երաժշտագետների ուսումնավիրության առարկա: Երաժիշտ տեսաբաններից Ա.Քոչարյանն է անդրադարձել դրանց ներքին տաղաչափական հարցերի կառուցիկ օրինաչփությունների լուսաբաննանը (2.էջ 41-65): «Աշուղ Ղարիբ» սիրավեպի ամբողջական եթոներաժշտական քննությանն է նվիրված Լ.Վ.Երնջակյանի դրկտորական ատենախոսության V գլուխը, Լ.Վ.Երնջակյան «Աշուղական սիրավեպը հայ-արևելյան երաժշտագիտական փոխաննչությունների համատեքսում» սեղմագիր (դրկտ. ատենախոսություն) Ե., - 2004թ.: Գիտարշավային Ծյութը (գրանցված են շատ տիպական, հստակ օրինաչփություններով օժտված ննուշներ) տեսական ընդհանրացումների և համեմատական վերլուծության իրական հնարավորություն է տալիս: Հետագայում նենք առավել ծավալուն համեմատական հետազոտություն կատարելու միտում ունենք, սակայն առայժմ սահմանափակվենք միայն «Աշուղ Ղարիբի» Զավախքում գրանցված տարբերակի տաղաչափական առանձնահատկությունների վերհանումով:

«Աշուղ Ղարիբ» սիրավեպի 50 երաժշտական հատվածների կատարողներն արմատներով առավելապես կարինցի են, սակայն, ինչպես նշում է Ե.Լալայանը (3.էջ 35), տեղի բնակչության լեզուն կարոն և Արդահանի բարբառների փոխազդեցությունների արդյունքում առաջացած նոր՝ ընդհանրացված, բարբարի շունչ է ստացել և

* Աշխատանքը հիմնված է աշուղական երգերի ու սիրավեպերի երգվող հատվածների վրա: Բոյլոր օրինակները ծայնագրվել են Զավախքում (Վրաստաճի Հանրապետության Ախալքալաքի, Բոգդանվկայի, Ախալցխայի, Ծալկայի շրջաններ) ԳԱԱ Արվեստի ինստիտուտի, Երևանի Պետական Կոնսերվատորիայի և Հայաստանի Կոնֆուսիոնների Միության կողմից կազմակերպված միացյալ գիտարշավի ժամանակ (1967թ.), և համալրվել Զ.Թագակյանի (1970թ.) ու Շ.Պիկիչյանի (1985թ.) անձնական գիտարշավային գրանցումների շնորհիվ: Նշենք, որ նյութը մինչև օրս հրատարակված չի եղել և առաջին անգամ մեր կողմից է վերծանվել ու երաժշտագիտական քննության առնվել:

Այս մասին տես՝ Դ.Դամիելյան, Եղեգնաձորի շրջանում կատարված աշուղական սիրավեպի երաժշտական հատվածների տաղաչափական որոշ առանձնահատկությունների մասին (1. էջ 41-65):

ոչ միայն կենցաղում է կիրառվում, այլև՝ ժողովրդական բանահյուսության մեջ: Այսպիսով, 19-րդ դարի 30-ական թվականներին Արևմտյան Հայաստանի կարոն և այլ շրջաններից գաղթած հայությունն այնպես է սերտածել Զավախքի տեղաբնակ հայության հետ, որ այսուհետև կարելի է նշել այս շրջանում կենցաղի, ավանդույթների, մտածողության, խոսքի և երաժշտական լեզվի ընդհանուր օրինաչափությունների մասին (3.էջ 37):

Հավանաբար, հենց այստեղ պետք է փանուրել «Աշուղ Ղարիբի» քննարկվող նմուշներում գործող տաղաչափական օրինաչփությունների ընդհանրության պատճառը: Ի տարբերություն Զավախքի, Վայոց Զորում կատարվող սիրավեպերի նմանատիպ ուսումնասիրությունից եզրակացնում ենք, որ տեղի բնիկ կատարողները հակված են ասերգային-վանկական երգեցողությանը, մինչեւ պարսկահայերը, որոնք շրջանի բնակչության մեջ մասն են, նախնական են երգային կերպը: Երգային սկզբունքը մեծամասամբ հիմնված է տաղաչափության չափական համակարգի վրա. այսինքն՝ քվանտիտատիվ* (քանակական) հարացույցն (նոդել) է կազմում երգի առանցքը: Պատկերն այլ է Զավախքում, ուր քննարկվող 50 օրինակից 42-ում գործում է երգային սկզբունքը, և միայն 8 օրինակներն են հարում ասերգային ծիկն: Մտածողության հիշյալ երկու կերպերի միջև այստեղ գործում է երրորդ՝ անցումային ծևը, որը դեռևս չափական է, սակայն աստիճանաբար մոտենում է ասերգային վանկական համակարգին (այսպիսի անցումային ծևերի միայն Զավախքում ենք հանդիպում)**:

«Աշուղ Ղարիբի» քննարկվող տարբերակներում հիմնականում գործում են աշուղական մտածողությանը հատուկ «տեքստային-մե-

* Քվանտիտատիվ - (քանակական) տաղաչափական համակարգը կոչվում է նաև երաժշտախոսային կամ չափական: Այդ համակարգի հիմքն է երգեցողությունը բառի և երաժշտության միասնականությունը: Ինչպես հայտնի է, բառը բաղկացած է վանկերից, իսկ երգվող վանկը կարող է լինել տարբեր տևողության: Այսպիսով, քվանտիտատիվ համակարգը հիմնված է երկար և կարճ (սուլ) վանկերի կամնավլոր հաջորդականության վրա, որոնցից են երգվող բանաստեղծության ոտքերը: Կանկերի տևողությունը հաշվարկում են ամանակներով (ամանակ – ժամանակ, որա, protos–chronos, սլոգօրեմա, ո.թ. սլոգոնոմա): Այսպիսով, ամանակ բառը նշանակում է երգվող վանկի տևողությունը: Ամենակարծ (սուլ) երգվող վանկն անվանվում է միամանակ, երկար վանկերը կարող են լինել երկամնանակ, եռամանակ և այլն: Քվանտիտատիվ (չափական) համակարգի կշռության օրենքները համընկնում են վկալ (երգվող) երաժշտական օրենքների հետ (6.9):

Կամկաչափության հարցերի վրա մեր ուշադրությունը հրավիրել է արվեստագիտության թեկնածու Կ.Խուլաբաշյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

** Օրինակները տես՝ ստորև:

ղեղիական տիպական կշռույթները» (4. էջ 109), որոնք փաստորեն, տեքստի և մեղեդու կշռութային փոխհարաբերությունների վերացարկված դրսւորումներու են և դիմորոշ նշանակություն ունեն երգերի որոշակի խմբի համար (օր. 11վ. 6+5 բաժանումով): Այսպիսի սինկրետիկ կշռույթները տաղաչափության քվանտիտատիվ համակարգի երաժշտական մարմնավորումն են. հարացույցներ, որոնք տարբեր բնութագիր են ստանում կախված տողի վաճակների քանակից, նրանց դրսւորման կերպից և ամանակից:

Սիրավեպերի առավել տարածված մեղեդիները, ծնշող մեծամասնությանը, չափական (մետրիկական) համակարգի վրա են հիմնվում, որոնք սիրավեպը կազմող բաժիններից ամենահիշվողը, բնութագրականն ու երկարակյացն են: «Պատահում է, որ մոռացվում է խոսքը, և նախկին մեղեդու վրա նոր խոսքեր են հյուսվում: Սակավ չեն նաև հակառակ օրինակները, երբ մնայուն խոսքերին մի նոր մեղեդի է միանում, և միայն տաղաչափական հարացույցն է, որ տվյալ պարագայում կազմակերպում է այս միացությունները՝ դառնալով խոսք - մեղեդի կապի համար ընդհանուր հայտարար:

Սակայն, ինչպես է շեշտական (քվանտիտատիվ) լեզվի համակարգում գոյատևում չափականությունը, որը բնորոշ է քվանտիտատիվ լեզուներին: Չմոռանանք, որ չափական շարադրանքի հնարավորությունը շեշտական լեզուներում միայն երգվելով է արտահայտվում (5. էջ 23-24): Այսինքն, ոչ քվանտիտատիվ լեզվի առկայությամբ, «ամանակադրության օրենքները» երաժշտական արտահայտամիջոցներով են գործում, քանզի չափական (մետրական) տաղաչափության հիմքը կազմող երկար և կարծ (սուլո) վաճակներն իրենց ամանակային բացահայտումը մեղեդու մեջ են գտնում: Այդ պատճառով էլ, չափական համակարգի վրա հիմնված երգվող հատվածներում բանաստեղծական տողը (սինտագմա) կորցնում է իր առաջնայնությունը՝ հօգուտ երաժշտական բաժանման*: Դեռևս 19-րդ դարավերջում, հիմնվելով հայոց վիպերգերի օրինակների վրա, այս մասին գրել են Ա.Բագրատումին և Ա.Բահարյանը. «...հին հայոց քերթողներն իրենց բնական առողջապահությունը և տո-

* Նկատենք, որ երգեկիս բանասացները հաճախ փոփոխություններ են թույլ տալիս բանաստեղծական տեքստում, ավելացնում կամ ընդհակառակը՝ կրծատում են վաճակները, սակայն տողի ամանակային տևողությունը դրանից չի խախտվում, քանի որ երգողները վաճակ ավելացնելիս ավելի փոքր տևողություններ են օգտագործում, և ընդհակառակը: Դա, այսպես կոչված, հավասարատևթան (ազօրինություն) օրենքն է, որը չափական համակարգի գլխավոր օրենքներից է (6. էջ 285-286):

Տես՝ Տիմոֆեև Լ., Основы теории лингвистики, М. 1959.

ղերի անցումները և տողերը բաժանված էին վաճաչափով», «բացե ի բաց հերթելով հայոց տաղաչափության ամեն օտարախորք և անհարազատ կազմակերպությունները և ընդունելով վաճաչափը միայն՝ որն և պարզ աչքով նկատում ենք տիրապետած մեր ամեն քերթվածքների մեջ» (7. էջ 116):

Ինչպես գիտենք, Կոմիտասը նույնպես պնդում էր, որ «Յայ երաժշտության մեջ ոտքերը բաժանվում են ոչ թե շեշտադրության, այլ ամանակադրության օրենքով»*: Բագրատունու և Բահարյանի խոսքերը բանաստեղծական տեքստին են ուղղված: Կոմիտասը դիմում է երաժշտական օրինաչափություններին, սակայն այս երկու մոտեցումների մեջ մի ընդհանուր կետ կա՝ խոսքի և երաժշտության մեջ գործող ամանակային հարաբերությունների առաջնայնության խնդիրը: Այս պարագայում է, որ խոսքը դառնում է «երաժշտական խոսք», և շեշտը, որը կշռույթի կազմակերպիչն է, տեղի է տալիս կարծ և երկար վաճակների (երաժշտության մեջ՝ տևողությունների) հարաբերակցությանը: Ժողովրդական երաժշտության տիպաբանության ուսումնասիրության ասպարեզում, 19-րդ դարի վերջին տասնամյակից սկսած, «Ամանակադրության օրենքը» (Կոմիտաս) դարձել է հիմնական մեթոդներից մեկը և նշանակում է երաժշտության և տեքստի կշռույթի և չափի համատեղ ուսումնասիրություն, ընդ որում վերլուծության ընթացքում «դուրս է բերվում» վաճակի ընդհանրացված տևողությունը (օճօճառությունը և օճօճառությունը) և սատ ստացած տվյալների, ձևավորվում են ոտքերը, տողաչափը (տողը կազմող ոտքերը) և տունը (սուրօփա) կազմող տաղաչափական ձևերը:

Աշուղական երգերն ու սիրավեպերը հիմնականում (Զավախքում) չափական համակարգի օրենքներին են ենթարկվում՝ տողից տող կրկնելով ընտրված ուսումնաչփը, հաճախ հաստատելով այն նաև ձայնավորների և մեղեդու հենակետերի կայուն դիրքով:

Այս տեսանկյունից փորձենք քննել «Աշուղ Ղարիբի» Զավախքում գրանցված 50 օրինակները, որոնք ըստ տողերում վաճակների քանակի և տողի տրոհման ձևի բաժանվում են երեք խմբի՝ ա. օրինակներ, որոնք ունեն 6Վ+5Վ բաժանումով 11 վաճակներ, բ. օրինակներ՝ 4Վ+4Վ+3Վ բաժանումով 11 վաճակներ, և գ. ասերգային կերպի օրինակներ:

* Կոմիտաս. Մի թռուցիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վրա (ձեռագիր գտնվում է Կոմիտասի դիվանում Ե. Զարենցի ամվ. գրականության և արվեստի պետ. թանգարանում):

«Աշուղ Ղարիբի» առաջնի խմբի երգերութ (11վաճականի 6Վ+5Վ բաժանումնով) **տաղաչափական ծևերը** հետևյալն են.

Ա կերպ*

Բ կերպ

Գ կերպ

Դ կերպ

Φορδեნք կոնկրետ օրինակների վրա ի հայտ բերել վերոհիշյալ տաղաչափական ձևերի կապը և տեսնել, թե ինչ եղուր ունեն դրանք միջյանց հետ: Քննենք «Աշուղ Ղարիբի» «Գլխով պտուտ գամ ծնող թանկագին» հատվածը, որի փաստորեն Ա կերպի վանկաչափի անանակային գրանցման մեջացված տարրերակն է:

Նշված օրինակի ընդհանրացված վանկաչափը հետևյալն է՝

Զնայած հստակ պահպանվող պարբերական չափին, մեղեդու մետրական ուժեղ նասերը նշանակալի դեր չեն խաղում, ուստի ոսքերը դուրս են գալիս եռամաս չափի սահմաններից՝ ներկայացնելով վաճակերի զուտ ամանակային կապերը։ Նետաքրքիր բնութագիր ունի առաջին վեցավանկ կիսատողը։ Նախնական տպավորությամբ թվում է, թե սա 4-րդ պետին և մեծավերջի միացությունն է, սակայն իրականում չորրորդ պետն է վերջնամասի կրկնությամբ (այստեղ խիստ զգացվում է 11 վանկի 4Վ+4Վ+3Վ տրոհման իներ-ցիան):


Առաջին քառավանկի վերջին երկար պահը հաստատման կարիք ունի, և որպես դիմագրավող ուժ (**Ճ** - **Ճ** (թեզ) - **Ճ** (անտիթեզ)), նրան հաջորդում է իր հսկ «կարճ» տարրերակը:

Երկրորդ կիսատողն ամփոփում է այս երկու պահերը (սինթեզ), սուլը և երկար միավորելով մեկ երկար տևողության մեջ (••••••••):

* Այստեղ և հետագայում թերվող ուղբերի կշռութային տևողությունները չեն համապատասխանում իրական վանկաչափական կշռույթներին (օր. 6-րդ և 8-րդ ամանակները իրականում այսպիսի տևողություն ունեն. գամ ծը — նող - ժ. ժ. ժ.), բայց համաձայն հարացույցի (մուլտիպլիքատուրա) օրենքների նրանց չափերն ընդհանրացված են սուրբ և երկար սահմաններում:

Փաստորեն, Ա կերպի մեջ հիմնականում գործում է 4-րդ պետք, չնայած 6վ+5վ բաժանմանը:

Այժմ վերլուծենք Գ կերպի մի օրինակ, որը Ա կերպի շատ ինքնուրույնացված տարբերակն է:



Դամադրենք երկու օրինակների ոտքերը*

Ա կերպ (**♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪**), Գ կերպ (**♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪ ♪**)

Ինչպես տեսնում ենք, ոտքերը տարբերվում են առաջին վեցավանկ կառույցում. 4-րդ պետքին հաջորդում է համբույրը (սպոնդեյ), որը առավելագույնս հաստատում է 4-րդ պետքի վերջին երկար վանկը:



Այժմ հետևենք, թե 6վ+5վ կառույցները ինչ յուրահատկություն ունեն Բ կերպում —

Եթե հետևենք 11 վանկի բանաստեղծական տողին, ապա այն տրոհվում է 4վ+4վ+3վ ոտքի.

Երանի ձեզ - որ գնում եք – հայրենիք,

Կազմել եք ինչ – սիրուն երամ – կռունկներ*:

(Սիրավեպի այս հատվածը՝ Յ. Պիլկիչյանի վկայությամբ, հաճախ կատարվում է հարսանիքների և խնջույքների ժամանակ, հատկապես օտարության մեջ գտնվող հարազատների կենացը «ծաղկացնելիս»):

* Այստեղ Ա-ի ամանակը հավասարեցված է ♪ :

Երաժշտական միտքը կիսատողերի հետևյալ չափակարգն ունի.



Կիսատողի ամենաերկար պահը 6-րդ վանկի հետ է համընկնում և բանաստեղծական տողը մեղեդու թելադրանքի համաձայն է բաժանում.

Երանի ձեզ, որ գը - նում եք հայրենիք,

Կազմել եք ինչ սիրուն - երամ, կը-ռունկներ:

Բ կերպն իր հարացույցում հետևյալ տեսքը կընդունի (մեկ ամանակը = ♪)



Վերջին՝ Դ կերպը, չափական համակարգի համաձայն երգվող 6վ+5վ բաժանումով 11 վանկանի օրինակներում առանձնահատուկ տեղ է գրավում (տես հոդվածի վերջը N 3): Այն բավականին ամորֆ և անկայուն կառուցվածք ունի. 6վ+5վ-ի է բաժանվում ելնելով բանաստեղծական տողի տրոհումից: Առաջին 6 վանկերը հավասար ♪ - ներ են, իսկ առանց երկար պահի տրոհումը պայմանական է դարնում: 6 վանկանի անդամի վանկաչափն ընդիուպ մնութենում է գուտ վանկական ձևի՝ սակայն որակական սահմանը չի խախտում.



Դո — րի - զո — նրդ ամ — պոտ, սա - րե - րոդ մր - շուշ

Փաստորեն, բանաստեղծական տեքստի շնորհիվ է, որ երգը մնում է չափական մտածողության սահմաններում: Նշենք, որ Ծալկա - (յի) վերջին 12-րդ վանկն ավելացվել է բանասացի կողմից և պետք է գումարվի կա - յի - վանկերի ամանակներին):

Այժմ հետևենք, թե ինչպիսի պատկեր է առաջանում, եթե 6+5 վանկանի կառույցները գուգորդվում են մեղեդու երաժշտական ոտքի հետ (ամանակը հավասար է ♪ - ի).

Ա կերպ 21 ամ.(12+9) 11Վ. (6+5)

Գ կերպ 16 ամ. (9+7)
11վ. (6+5)

Բ կերպ 24 ամ. (12+12)
11Վ. (6+5)

Դ կերպ 20 ամ. (6+14)
11վ. (6+5)

(Վանկերի և աճանակների միջև կանոնավորված փոխհարաբերությունները չենք տեսնում):

Վերը բերված օրինակներից կարող ենք առանձնացնել 6վ+5վ բաժանումով 11 վանկանի տողի հիմնական վանկաչափական հարցույցները (նորել) *. անանակը = ♪ ,

Ա կերպ ♩♩♩♩♩♩|| ♩♩♩♩

Գ կերպ ♩ ♩ ♩ ♩ ♩ | ♩ ♩ ♩ ♩

Բ կերպ ժ ժ ժ ժ ժ ժ | Դ կերպ ժ ժ ժ ժ ժ ժ |

Դ կերպ

Ա և Գ Կերպերի ջնդիանուր կառուցրողական հատկանիշների մասին վերն արդեն խոսվեց: Ընդգծենք մեկ անգամ ևս, որ այս երկու կերպերի համար էլ իմաստային առանցքը 4-րդ պետն է, որը գլխավոր գաղափարի կրողն է՝ անկախ տողի վաճական տրոհումից: 4-րդ պետն ամփոփ ամբողջություն ներկայացնող ամենափոք միավորն է, որը հիմք է դառնում և  և  և 

Առավել հետաքրքիր է հետևել Բ և Դ կերպերի ընդհանրությանը: Եթե դիտարկենք Բ կերպի ողջ տողը, ապա դա 6-առու մեծավերջին տարրերակ է (Վերջին 6-որ ոտքը գումարվել է $\text{J} = \text{J}$, ըստ էության սա հերսամետր է $\text{J} = \text{J} = \text{J} = \text{J} = \text{J} = \text{J}$):

Այսպիսով, 6Վ+5Վ բաժանումով 11 վաճկանի տողերի համար տիպական են հետևյալ որդեռոք:

„♪♪♪♪ - 4-րդ պեոն (Փասիլա մեծ)**, ♪♪♪♪ - Երկնեծավերջ (ոհ-լամբ):

* Ռուսերեն այս եղրը մոդելի բազմաթիվ հետազոտողների մոտ արտահայտվում է հետևյալ բառերով՝ “слогоритмическая модель”, սակայն Կոմիտասը տալիս է ավել-լի ստուգ եղր «վանկաչափական», այլ ոչ թե վանկաչորթային», քանի որ իրոք վանկի չափի (ամանակ) - այսինքն տևողության հետ գործ ունենք, այլ ոչ թե կշռոյ-թի (բառով):

** Փասիլա մեծք՝ տաղաչափական ուրբերից է, որը հայ աշուղները մեծ սիրով են օգտագործում իրենց ստեղծագործություններում:

Այս 4 վաճակնի կառույցներն առավել հստակ են դիտվում մեկ այլ խմբի երգերում, որտեղ տաղաչափության թելադրանքով 11 վաճակնի տողը $4\psi+4\psi+3\psi$ վաճակների է բաժանվում: Այս դեպքում ոտքերը հետևյալն են.

Ե Կերպ

Ե հա ն կա սա նը, ես բա զա ալ մայ թիւ,
Ես ւա - քիցն եմ, Ես ւա - քիցն եմ, Ես ւա - ես քիցն եմ,

Զ Կերպ

Ի՞ն ա - սա - սին, ե - կար աս - սա - սին մը - տար,
Ա - զի - մնի, որ ույս - մնի լուրջ ո լու - նոն լու,
մի - քի՞ն ոյս բու - զու - լու զոս ոմ - ոմի զը - տար,
խնձ չէ - իր ի - մո - զնի, ով ոմ - զնի որ - զու

Է Կերպ

Ես կա բա արդ ինձ ըս պա նեն, որ պա կրս,
որ - պա - կըս

Ը Կերպ

Գու յա վրա ար տառ զամ, օր նազ բան կա մին,
որ - իս ծառ ուս - ուսու օրու ժամ բան կա մին

Թ կերպ

Մոնթ կա - բա - սազ օ - սա - բա - բյան գի
մն ցը կի
կա - լամ կը - մը - կը - տիմ, թէ ոչ ոք շա - նիմ,
ափ - սոս, խն - չի բնը - նն - թն - բան զը
ցն ցը կի
կա - լամ կը - մը - կը - տիմ, թէ ոչ ոք շա - նիմ:

Փորձենք պարզել, թե ինչ ընդհանուր ուղղվածություն ունեն այս ոտքերը և Զավախքում որոնք են դրանցից ավելի տիպականները:

Տաղաչական ե կերպի տիպիկ օրինակ է Ախալքալաքում ձայնագրված «Տեր իմ, չունի ուրախալի հիշատակ» հատվածը:

11 վանկանի 4վ+4վ+3վ բաժանումով տողը, փաստորեն, ոչ մի խախտման չի ենթարկվում՝

տողաչափը մշտապես անփոփոխ պահպանելով: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, վանկաչական այս հարացուցք մեծ տարածում ունի նաև Վայոց ձորում և Շիրակում:

Զ կերպի հիմքն իոնիկն է. (տես, վերը բերված օրինակը).

Ուշագրավ է, թե ինչպես բանաստեղծական տաճ 4 տողերում աստիճանաբար փոփոխվում են ոչ միայն ոտքերը, այլև՝ ամանակային լիցքավորումը: Այս օրինակում 1-ին իոնիկը մնալով իիմնական ոտք (11 հատածից 6-ը՝ 1-ին իոնիկն է) մյուս հատածներում փոփոխվում է ուրիշ ոտքերով, որոնք ամանակների քանակով պակաս կամ ավելի են իոնիկների 6 ամանակից: Այսպիսի ամանակային փոփոխությունները խախտում են տողերի հավասարատևությունը:

Դիտենք՝ 1 տողը 18 ամանակ է (ամ=♪), 2-րդ տողը 24 ամանակ է, 3-րդ տողը 14 ամանակ է, 4-րդ տողը՝ 20 ամանակ է: Այս հանգամանքը ժխտում է հավասարատևության օրենքը, որի համաձայն տողը տարբերվում է մյուսից ոտքերով, բայց ոչ ամանակների թվով:

Դաջորդ՝ Ե կերպը, ընդհանուր գիտարշավային նյութի մեջ սակավ պատահող ոտք է, որի հիմքը 1-ին էակտորիտն է (առաջին քառավանկ ոտքի այս տեսակը հանդիպում է նաև 8-ավանկ 4վ+4վ բաժանումով տողերում): «Աշուղ Ղարիբ»

Օ - տա - բա - բյան մնց ցը - կի - վան - դա - նա - յի

11 վանկանի 4վ+4վ+3վ տրոհումով 18 օրինակից այս ոտքը միայն երկուսում ենք տեսնում.

Եթե հետևենք Ե, Զ, Ե կերպերում կարճ և երկար վանկերի փոխհարաբերության ձևին, կնկատենք, որ աստիճանաբար երկար վանկերը սկսում են դոմինանտային դիրք գրավել, սակայն կարճը մշտապես նախորդում է երկարին.

Ե կերպ
Զ կերպ
Ե կերպ

Նյութի քննությունը ցույց է տալիս, որ կարճ - երկար փոխհարաբերության գաղափարը համարյա բոլոր կերպերում մնայուն է: Այլ հարց է, թե այդ երկուսից որ պահն է ավելի ծանրակշիռ: Զանաձայն դրա, շարժումն աստիճանականից վերածվում է «քողչքայինի» / ակտիվացնելով կշռութային (օթբնական) պատկերը:

Ավածը հաստատում է միակ բացառությունը, որը ներկայացնում ենք որպես Ը կերպի տողի վանկաչական հարացուց՝ 6/8

Սա մի եզակի օրինակ է, (և աշուղական երգերի և սիրավեպերի մեջ), եթե ողջ երգի ընթացքում տողի յուրաքանչյուր անդամ (ոտք) սկսվում է երկար ամանակով և ամեն անգամ անդամի առաջին երկար վանկի հաստատում դիրքը պահպանում է: Այսպիսով, ոտքը բնակ հաշվի չի նստում բանաստեղծական տողի տրոհման հետ

(որը բաժանվում է 6Վ+5Վ կառուցմերի), իսկ վերջին եռավանկ անդամի սկիզբն անընդհատ ընդգծվում է ոչ միայն երկար ամանակով, այլև՝ վանկի վարընթաց մեղեդային եղանակավորումով*:

Առավել մեծ տարածում ունի Թ կերպը, որը 4Վ+4Վ+3Վ բաժանումով 11 վանկամի տողի չափականից վանկականի (սուլաբսկա) անցման սահմանային կերպն է՝



Դետևելով տողերի կառուցվածքին, տեսնում ենք, որ այն դեպքում, երբ առաջին և երկրորդ անդամների վանկերը հավասար ամանակ ունեն, (Ջ.Ջ.Ջ.Ջ.Ջ.Ջ.), տրոհումը կատարվում է ըստ բանաստեղծական տեքստի, իսկ երկրորդ և չորրորդ տողերում, որտեղ առաջին անդամի կշռութային պատկերն է՝ Ջ.Ջ.Ջ.Ջ., տրոհումը կատարվում է չափական համակարգի օրենքներով, այսինքն կետագծային ռիթմն ստեղծում է երկմեծավերջի զգացումը՝ օգնելով 4Վ+4Վ+3Վ կառուցվածքի կայունությանը։ Այս Թ կերպում առաջին 8 վանկերի անընդհատությունը (8 կարծ վանկի հերթագայությունը) վանկական տիպն է հիշեցնում, սակայն վերը նշված միջոցները պահպանում են չափական համակարգի գաղափարը, հաստատելով այն վերջին եռավանկ անդամի վրա։

11 վանկամի տողի 4Վ+4Վ+3Վ կառուցմերը և ոտքերի ամանակների հետևյալ հարաբերությունն ունեն՝ (անձակը. ♫ - ն է)

Ե կերպ 15 ամ (5+5+5)
11 Վ (4+4+3)

Ը կերպ 18 ամ (6+6+6)
11 Վ (4+4+3)

Զ կերպ 17 ամ (6+6+5)
11 Վ (4+4+3)

Թ կերպ 18 ամ (4+4+10)
11 Վ (4+4+3)

Է կերպ 19 ամ (7+7+5)
11 Վ (4+4+3)

* Նշենք, որ բերված վանկաչափական ձևը, կազմելով մեծասար + մեծավերջ + քողարոր ոտքերի հերթականությունը, բնութագրական է հայկական պարերգերի համար (9. էջ 8-9):

Ինչպես ակնհայտ է, վանկ - ամանակային հարաբերությունների մեջ կամոնավորություն չկա:

Ներկայացնենք 4Վ+4Վ+3Վ բաժանումով 11 վանկամի տողի հիմնական վանկաչափական հարացույցները՝

Ե կերպ ♫♪♪♪♪♪♪♪♪♪♪♪♪, **Է կերպ ♪.♩.♩.♩.♩.♩.♩.♩.♩.**

Զ կերպ ♫♪♪♪♪♪♪♪♪♪♪♪, **Թ կերպ ♫♪♪♪♪♪♪♪♪♪♪♪**

Ը կերպ ♪.♩.♩.♩.♩.♩.♩.♩.

Մեր կարծիքով, Ը կերպն օրինաչափությունների շարքում պետք չէ քննարկել, քանի որ այն իր տեսակի մեջ միակն է և հետագայում, աշուղական այլ սիրավեպեր ներկայացնելիս նույնպես չի հանդիպի: Իհարկե, 4Վ+4Վ+3Վ բաժանումով 11 վանկամի տողի համար ամենատարածված վանկաչափական հարացույցն է՝

♪♪♪♪♪♪♪♪♪♪♪, որտեղ պահպանված է և առաջին քառավանկ անդամի (որպես ամբողջ տողի համար խտացված ինաստային բժիջ) նշանակությունը, և սուր ամանակից դեպի երկարը անցման գաղափարը: Զ և Է կերպերում քառավանկը նույնպես տեղեկատվական միավոր է, սակայն ավելի և ավելի կարճանում է սուրից երկարին տանող ճանապարհը, պահպանելով «Աշուղ Ղարիբին» հատուկ վանկաչափական հարացույցների հիմնական հատկությունը՝ ձգտում սուրից երկարին, և անդամի, և տողի վերջի ավարտը երկար ամանակով:

Ինչպես տեսնում ենք, նշված երեք կերպերում այս սկզբունքը գործում է անխափան: Փոքր-ինչ առանձնանում է Թ կերպը, որտեղ առաջին անդամի քառավանկությունն այդքան հստակ չի արտահայտվում, սակայն, եթե հետևենք ողջ տողին, կտեսնենք, որ այստեղ ևս առկա է սուրից երկարին ձգտումը պարզապես, ոչ թե անդամի, այլ տողի սահմաններում. այս կերպը, անկասկած, եզրեր ունի ասերգային կատարման ձևի հետ:

«Աշուղ Ղարիբ» սիրավեպում նշանակալի մաս են կազմում 4Վ+4Վ բաժանումով 8 վանկամի տողով հատվածները, որոնցից բերում ենք հետևյալ ամենավառ օրինակները՝

Ժ կերպ

Մն զա - տա - վար, ինչ - պիս ա - նսմ,
նս դաս - նամ, սիր - տըս շի դաս - նամ,

Ի կերպ

Գու - լու տիգ դորս հ - կուլ մի կուլ,
զոր - քիր որ - սոր, որ - սոր (թ) հ - կուլ,
որ ոչ - խոր - ին ոոո - ոոո - ձն յորս,
զոր - քիր որ - սոր որ - սոր - որ հ - կուլ,

Լ կերպ

հ - կու ոոո - ֆի - լո թի - զոր - ֆիզ,
լա - բորս, ինչ մի օռ - նու - սորս ոոո,

Խ կերպ

Աւ - ևա ն - լա, եց - կըմ ինք - քամ,
հոռ - ոռո - ոռ մի - նոռ հոռ - ոռո,

Յետևենք 4Վ+4Վ բաժանումով 8-ավանկ տողում ամանակների տրամաբանական ուղղվածությամբ: Տարածված վանկաչափական հարացույցներից է Ժ կերպ՝ **Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ**: Այստեղ գործում է փոփոխական մետրը 4/4-3/4-4/4, կայուն մնալով ամբողջ երգի ընթացքում:

Ի կերպը, ըստ Էնթյան, ամենասիրված վանկաչափական բանաձնն է (8Վ. տողի համար): Յետևենք տողից տող զարգացմանը՝

6/8 **Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ**

Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ

Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ

Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ

Այսպիսի տողերը պահպանվում են բոլոր տներում, իսկ 2-րդ տողն առանձնանում է 1-ին ոտքի կազմությամբ /Ճ ճ ճ ճ/, միայն 1-ին տան մեջ: Մնացյալ տները հաստատում պահպանում են նշված ոտքերի հերթականությունը:

Այժմ, ուշադրություն դարձնենք ոտքերի և մեղեդու ուղղվածություններին: Ոտքերի կառուցք դրսենորվում է կարճից երկարին **Ճ ճ ճ ճ**, իսկ մեղեդին սկսվում է իր ամենաբարձր կետից և ամենաերկար պահին հասնում իր ամենացածր կետին (մի) և շարադրված է մի-ի ոլորտում: Առաջանում է մեղեդու և ոտքի հանդիպակաց շարժման մի տեսակ:

Լ կերպն ընդհանուր առնամբ հիշեցնում է Ժ կերպը, պարզապես վերջինս կրկնում է Լ կերպը 2-րդ ոտքի մեծացումով.

Լ կերպ **Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ**

Ժ կերպ **Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ**

Այս պատճառով նպատակային ենք համարում երկու կերպերը ներկայացնել Լ կերպի տեսքով՝ Ժ-ն դիտարկելով որպես տարրերակ:

Եվ, վերջապես, ամենասակավ պատահող վանկական համակարգն է՝

Խ կերպ **Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ**

Ճ ճ ճ ճ Ճ ճ ճ ճ (Այս բանաձնը պատահում է երկու դեպքում):

Թեև բանաձևը արտաքին տեսքով մոտենում է տաղաչափական վանկական համակարգին և վերջինիս հետ ընդհանուր կետեր ունի, բայց և 2/4 չափը, և բանաստեղծական տեքստի հստակ անդամների բաժանումը, և վանկերի եղանակավորումն ազատում են հավասար ամանակով երգվող ասերգային ձևի խարկանքից: Նշենք, որ ոտքերը պահպանվում են ի հաշիվ 2/4 չափի վանկերի եղանակավորման, որը դանդաղեցնում է կատարման տեմպը, «լսելի» դարձնելով 4Վ+4Վ միությունը:

4Վ+4Վ բաժանումով 8 վանկանի տողի համար առավել տիպական ենք համարում հետևյալ վանկաչափական հարացույցները՝

«Աշուղ Ղարիբի» երգվող օրինակների մեջ վերջին խումբն են կազմում վաճեկական - ասերգային բնույթի երգերը, որոնց ընդհանուրացված վաճեկ - անանակային պատկերն է՝



Ներկայացնենք մի քանի երգվող հատվածներ, որոնք առավել բնութագրական են վանկական - ասերգային ձևի համար.

Օրինակ 1.

The musical score consists of two staves of music. The top staff uses a treble clef and has lyrics: "U - sun - li - phe - qu - en - tine, am - aplan - tine," with a bracket under "tine" and a circled fermata over the final note. The bottom staff also has lyrics: "sun - phe - que, m - e - zon, tine, am - aplan - tine," with a bracket under "que" and another under "tine". Both staves are in common time (indicated by a 'C') and have a key signature of one sharp (F#).

Օրինակ 2. (Տես ամբողջական օրինակ N 8):

Այս ձևը պատկանում է վաճակական համակարգին, քանի որ յուրաքանչյուր վաճիկն համապատասխանում է մի ամանակ՝ բացառությամբ վերջին երեք վաճակերի, որոնք կարող են լինել 2, 3, 4 ամանակ և ավելի: Սակայն, ասերգային երգեցողության ժամանակ պահպանվում է վաճակահական վերը նշված հարացույցների մի անհրաժեշտ հատկություն՝ անդամի ներսում կարծից երկար ամա-

Նակին ճգտումը: Միայն այս դեպքում կարծ - երկար հարաբերությունը գործում է ոչ թե անդամի (քանի որ չկա) ներսում, այլ ողջ տողի սահմաններում, ժամանակի մեջ ընդլայնելով կարծ վանկերի գործառնության սահմանը: Եվ ինչ քանակի կարծ վանկեր էլ լինեն, վերցին հաշվով նրանք ավարտվում են երկար ամանակով:

* * *

Այսպիսով, ներկայացրեցինք «Աշուղ Ղարիբ» սիրավեպի Զավախիքյան տարրերակները, որոնց վերլուծությունը այս սիրավեպին հատուկ տաղաչափական օրինաչափությունների և վանկաչափական հարացույցների տեղական բնութագիրը ներկայացնելու առաջին փորձն է:

ՄԵԿ ԱՆԳԱՄ և դիտարկենք առավել տիպական հարացույցները՝ ներկայացված կերպերից ընդհանուր տիպեր ստանալու նպատակով. (ամ = ♪)

6Վ+5Վ բաժանումով Ա և Բ կերպերում վերն առանձնացրեցինք 4 վանկանի  (4 պես) և  (Երկմեծավերջ) ոտքերը, որոնք 4Վ+4Վ+3Վ և 4Վ+4Վ տրոհվող տողերում արդեն դառնում են բաց և ակնհայտ: Վերջիններիս միանում է Ժ կերպի 1-ին իոնիկը , որը 8 վանկանի տողերում հաճախ հանդիպող կառուցողական միավոր է:

Այս երեք ոտքերը ներկայացված նյութի ծանրության կենտրոնն են և ունեն սիրավեալի տաղաչափությանը հատուկ երկու կարևորագույն հատկություն՝

1. քառավանկը, որպես ոչ թե բանաստեղծական տողի, այլ չափական համակարգի կառուցողական հարացույց է,
 2. քառավանկի մեջ (ինչպես նաև ամբողջ տողում) կարծից երկար ամանակին ձգտելը: Վանկաչափական հարացույցներում առ-

կա այս երկու հատկությունները կարող ենք տեսնել 4 պետնի մեջ, որը գրեթե առանց բացառության գործում է աշուղական ստեղծագործության բոլոր վկալ ժամբերում:

Հիշեցնենք, որ հայերենը քվալիտատիվ լեզու է, և շեշտը միշտ վերջին վաճկի վրա է դրվում (բարբառներն առանձին մոտեցման կարիք ունեն): Նշենք նաև, որ երգվող խոսքն այս հատկությունը միշտ չէ, որ պահպանում է (շատ հաճախ երաժշտական արտահայտամիջոցները գեղարվեստորեն ընդգծում են շեշտված վաճկը, բայց ոչ կշռութային, այլ ինտոնացիոն հնարավորություններով): Իսկ աշուղական ստեղծագործություններում և ժողովրդական երգերում քվալիտատիվ լեզուն երաժշտական իմաստավորման շնորհիվ սկսում է գործել քվանտիտատիվ լեզվի օրենքներով: Աշուղներն ընտրում են այն ոտքերը, որոնք սկսվում են կարծ վաճկով (կամ վաճկերով) և ավարտվում են երկար վաճկով: Իսկ անդամը (սինտագմա) և տողավերջը միշտ ավարտվում են երկար վաճկով: Այսինքն չափական տաղաչափության համակարգը ինչ-որ ձևով համապատասխանեցնում են հայերեն լեզվի շեշտի օրենքներին, որտեղ շեշտը միշտ վերջին կամ նախավերջին վաճկի վրա է ընկնում, հետևաբար պահանջում է իր հաստատումը երկար վաճկով (10.):

Վերաբառնալով 4-րդ պետնին (Փասիլա մեծ), ասենք, որ, լինելով արուգի տաղաչափական բազմաթիվ ոտքերից մեկը, այն որպես տարորինակ երևույթ, հաճախ չի գործածվում արուցի տաղաչափական համակարգում (11. էջ. 24-42) և կարող է դիտվել որպես զուտ հայկական աշուղական մտածողությանը հատուկ ձև: Այսպէս, մեր դիտարկած նյութի քննությունից անվիճելի է կարելի է եղարկացնել, որ Զավախսիք աշուղական արվեստի համար այն հիմնաքարային նշանակություն ունի:

Ներկայացված աշխատանքը հետազոյւմ կլրացվի Յայաստանի այլ շրջանների հետ կապված ուսումնասիրությունների արդյունքներով, որն առավել լայն ընդհանրացումների հիմք կհանդիսանա:

Ծանոթագրություններ

- Արվեստագիտություն, Յոդվածների ժողովածու 1, ՀՀ ԳԱԱ, Երևան 1999:
- Քոչարյան Ա.**, Յայ գուսանական երգեր, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976 թ.:

- Լալայան Ե.**, Երկեր, հ.1, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1983:
- Տավլան Ղ.** Բելօրուսկու կողալե, Մինսկ, 1986.
- Խոլդարաշյան Կ.**, Յայ ավանդական երգի տաղաչափական համակարգի հարցերի շուրջ. Յայ ժողովրդի մշակույթի հանրապետական գիտական նստաշրջան, 9: Ձեկուցումների հիմնադրույթները, Երևան, 1997:
- Տսմօֆես Լ., Օչորս տեօրս լսութանուր, Մ., 1959.
- Բահաթրյան Ա.**, Յին հայոց տաղաչափական արվեստը, 1984:
- Γοավուսկան Վ., Ս ստոկով նարծոնայ մուզեւս սլավյան, Մ., 1971.
- Կվուկա Կ., Իզбранные труды, т. 1, М., 1971
- Բաղդասարյան Ա.** «Շիրակի ավանդական պարերգերի տաղաչափության որոշ առանձնահատկություններ», «Յայ ժողովրդական մշակույթ» հանրապետական գիտական 9-րդ նստաշրջանի հիմնադրույթներ, Երևան, 1997:
10. **Խոլդարաշյան Կ.** «Զիվանու տաղաչափական արվեստը»: «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը»: Յանրապետական չորրորդ գիտաժողով: Ձեկուցումների հիմնադրույթները, Գյումրի, 2000:
11. **Խամբաք Մ.**, Օչորս տեօրս տյորքսկոց ստուխա, Ալմա-Ատա, 1969.

Diana Danielyan

About the metrics peculiarities of Javakhk version of "Ashough Gharib".

Summary

Using the method of syllabic-metric analysis the musical fragments of ashough tales about ashough Gharib, the author infers in her article the regularities of correlations between the poetical and musical structures.

ԼԻԼԻԹ ԹԱԼԱՆՉՅԱՆ

ՏԻՊԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Հայ ազգային երգաստեղության մեջ աշուղական արվեստը մշտապես համարվել է ամենասիրված ու կենսունակ բնագավառներից մեկը: Զևավորվելով հայ իրականության մեջ դեռևս 16-րդ դարում՝ այն փոխանցվել է սերնդե - սերունդ և իր կայուն տեղը գտնել ժողովրդի կենցաղում: Ծիշու է, այսօր աշուղական արվեստը բավական փոխել է իր դեմքը, նոր տեսք ու նոր բնույթ ստացել, սակայն իր մեջ պահել է այդ արվեստի ամենակայուն ավանդույթները:

Իր ծևավորման շրջանից սկսած՝ մինչև այժմ չի դադարել նորանոր աշուղների ստեղծագործական գործունեությունը, որոնք, իհմնվելով դասական աշուղների նվաճումների վրա, ստեղծել են իրենց երգերը՝ աշխատելով ենթարկվել աշուղական արվեստի օրինաչափություններին ու կանոններին: Իր բազմադարյան գարգացման ընթացքում աշուղական արվեստն իր մեջ հաստատել է կայուն մի համակարգ՝ իհմնված տաղաչափական կանոնների և դրանցից բխող տիպական եղանակների փոխկապակցված պրակտիկ կիրառման վրա:

Հայտնի է, որ աշուղական արվեստի ակունքները սերում են պարսկա - արաբական պոեզիայից (1. էջ 33): Սկզբնապես՝ աշուղների նպատակը պարսկական և արաբական պոեզիան քաղաքների մարդաշատ վայրերում ասմունքելով տարածելու էր: Նետագայում, աստիճանաբար ընդունված է դառնում պոեզիան երգելով մատուցելու եղանակը: Շուտով, աշուղները սկսում են հորինել սեփական բանաստեղծություններ՝ իհմնված պարսկա - արաբական պոեզիայի տաղաչափական օրինաչափությունների վրա և երգում ավանդական կամ ինքնաստեղծ մեղեդիներով: Աստիճանաբար, զարգացման ընթացքում աշուղական արվեստը շարունակել է մնալ նախ և առաջ իրև բանաստեղծական մշակույթի երևույթ: Թերևս դա է պատճառը, որ աշուղական արվեստում խոսքը գերիշխող է դառնում երաժշտության նկատմամբ: Աշուղի համար չափազանց կարևոր էր ունկնդիրին լսելի դարձնել նախ և առաջ խոսքը, ասելիքը, քանի որ իր խաղերը հորինում էր առաջին հերթին լայն լսարանի համար: Բացի այն, որ աշուղները հասարակությանը հայտնի էին որպես երգիչ նվազածու, նրանք, այնուամենայնիվ, նախ՝ բանա-

տեղը էին, փիլիսոփա, իրապարակախոս, հեքիաթասաց, և, վերջապես՝ քնարերգու: Դրանով է, թերևս, բացատրվում, որ աշուղական եղանակների մեջ զգալի է ասերգայնության առկայությունը, որովհետև, ինչպես Գ.Լևոնյանն է գրում «աշուղի համար իր խոսքերն ավելի կարևոր են լսելի դարձնելու, քան եղանակը. նրանք կարծեն ասում են, թե՝ տեսեք, մենք ինչ ենք ասում, ոչ թե՝ ինչպես ենք ասում» (2. էջ 267):

Աշուղական պոեզիայում գործածվող տաղաչափական ձևերի մասին աշխատություններ է գրել Գ.Լևոնյանը, որի համար տեղեկատվական աղբյուր է եղել հայր՝ աշուղ Զիկանին: Իրենց աշխատություններում աշուղական տաղաչափությանն այս կամ այն չափով անդրադարձել են նաև Ա.Քոչարյանը և Ն.Թահիմզյանը:

Ինչպես արդեն նշվեց, աշուղական տաղաչափության սկզբնական ձևերը արաբական կամ պարսկական ծագում ունեն: Աշուղները դրանք փոխունակ են առել արաբական «արուղի» համակարգից: Արաբական տաղաչափությունը իհմնված է բնությամբ կարճ և դրա կրկնապատկումը ներկայացնող երկար ձայնավորների (համապատասխանաբար՝ վանկերի) կշռութաստեղծ գործորդության սկզբունքի վրա: Այնպես որ բանաստեղծական տողի՝ որպես կշռութաստեղծ իհմնարար միավորի, գեղարվեստական արտասանությունն արտահայտում է կարճ և երկար վանկերի քանակային հակադրությունը, և չափելի է լինում ըստ կարճ վանկի տևողության: Այսինքն՝ որպես փոքրագույն միավոր ընդունվում է ամենակարճ հնչյունը (կամ վաճակը):

Հայերենը և թուրքերենը արաբերենի համեմատ հնչյունակազմության տարրեր իհմքեր ունեն, հետևաբար՝ տաղաչափական այլ համակարգեր են: Հայ, թուրք, պարսկի, վրացի, ազերի և այլ ազգերի աշուղները ուսումնասիրելով և օգտվելով «արուղի» համակարգից, հարմարեցրել են այն սեփական լեզվական օրինաչափություններին: Այժմ զարմանալի է թվում, թե մասնագիտական կրթություն չստացած, նույնիսկ դպրոցում չստորած մարդիկ ինչպիսի հիմնալի պատկերացում են ունեցել տաղաչափական գործոնների՝ հանգի, ոտքի, վանկի, տողի և տների կազմության մասին: Ժամանակի ընթացքում աշուղները մեկից մյուսին են փոփոխացել արևելքի աշուղներից ստացած ձևերը, որոնք, դարերի ընթացքում տարածվելով Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի աշուղների շրջանում, ենթարկվել են որոշակի փոփոխությունների, նոր ձևեր ձեռք բերել: Միջին դարերից եկած իհմնական տաղաչափական ձևերը ավելի շատ զարգացել ու մշակվել են Թուրքիայում՝ թուրք և թուրքերեն լեզվով երգող հայ աշուղների կողմից:

Տաղաչափական ձևերից յուրաքանչյուրն ունի տների, տողերի և վաճակների որոշակի քանակ, ոտքերի, հանգերի ու շեշտադրության պարտադիր օրենքներ (3.): Հիմնական տաղաչափական ձևերուն տները մեծ մասամբ քառատող են: Ամենատարածված ու գործածական ձևերից են «դյուքտեթը» և «դոշման», որոնք պարզ կառուցվածք ունեն: Երկու ձևում էլ 3 - 5 քանակի տները քառատող են, տող՝ «դյուքտեթում»՝ 8 վանկ (4-4), «դոշմայում»՝ 11 (6- 5 կամ 4-4-3): «Դոշման» ամենահարմար ու տարածված ձևն է, այդ իսկ պատճուղ չափազանց գործածական է արևելյան բոլոր ազգերի աշուղների կողմից: Զիվանու երգերի մեջ թվարկվում են շուրջ երեք հարյուր «դոշմա»: Այս ձևում գրված երգերը տարրեր են շեշտականությամբ, նաև՝ բնույթով ու բովանդակությամբ և երգվում են մի քանի եղանակով: Հիմնական տաղաչափական ձևերի մեջ կան և այնախիք, որոնք բավական բարդ և դժվար կազմություն ունեն: Դրանցից է «նուհամմազը», որում տարրեր են և տների, տողերի, և, նույնիսկ, տողերուն վաճակների քանակը: Հիմնական ձևերից բացի կան բազմաթիվ բարդ, կրկնակի և եռակի ձևեր, որոնք գոյացել են հիմնական ձևերի միացությունից:

Տաղաչափական հիմնական և բարդ ձևերից բացի աշուղների պարակտիկայում մեծ կիրառում ունեն նաև «տեխնիկական» կոչվող ձևերը (երբ առաջադրված որևէ կատարողական պահանջով արհեստականորեն բարդացվում է տաղաչափական որևէ հիմնական ձև): Տեխնիկական ձևերն ավելի շատ կիրառվում էին աշուղնական ամենատարրեր մրցությունների ժամանակ և նպատակ ունեին զարմացնել ու զվարճացնել ունկնդիրն՝ ցուցադրելով աշուղի վարպետությունը: Ամենահետաքրքիր ձևերից են «շրթունք չփաչչողը» («սոստախ դեկմագ»), առանց այն տառերի, որոնց արտասանության ժամանակ շրթունքներն իրար են դիմում (թ, պ, փ, մ), «լեզու չշարժողը» («դիլ թափրամագ»), որն այնպես է հորինված, որ արտասանության ժամանակ լեզուն բոլորովին չի շարժվում: Տաղաչափական և տեխնիկական այս ձևերում հորինելը բավական մեծ վարպետություն է պահանջում: Չափազանց դժվար է նման սահմանափակումների դեպքում ապահովել բանաստեղծական տեքստի տաղաչափական ծզգին կազմությունն ու, որ առավել կարևոր է, իմաստալից բովանդակությունը միաժամանակ: Այս խնդիրը հաղթահարել հաջողվել է լավագույն աշուղներին միայն՝ Սայաթ-Նովային, Զիվանուն և այլոց: Սակայն թե՝ նրանք և թե՝ այլ աշուղներ հաճախ են շեղվել այդ կանոններից երեսն պայմանականորեն միայն հարմարվելով դրանց: Տաղաչափական ձևերը ներկայացնելիս Գ. Լևոնյանը բերում է դրանց համապատասխան օրինակներ՝ տարբեր աշուղների

երգերից: Դրանցից շատերում թե՛ շեշտադրումը և թե՛ վաճակների ու ոտքերի բաժանումները խիստ պայմանական են: Հնարավոր է, որ դրա պատճառը հայերենի տաղաչափական այլ օրինաչափություններն են արաբականի համեմատությամբ, սակայն հնարավոր է նաև, որ պարսկա - արաբական պոեզիայում կամ աշուղների ստեղծագործության մեջ ևս տաղաչափական կանոնները խստորեն պահպանված չեն: Թեև տաղաչափական ձևերը սովորաբար կոչվում են երգեր, սակայն դրանցից ոչ բոլորն են երգեր ուղիղ իմաստով: Այդ ձևերից շատերը, ըստ էության, միայն տաղաչափության են վերաբերում և որևէ երաժշտական նիտում չունեն: Բայց կան և այնպիսիները, որոնք սերտորեն կապված են իրենց եղանակների հետ և հայտնի են եղել բոլոր աշուղներին՝ առանց ազգային խտրականության, օրինակ՝ «սելիս» անվանումը պայմանավորում է միայն որոշակի տաղաչափական ձև, և որոշակի եղանակ (մեղեդի):

Աշուղական արվեստն ունի շատ կուր տեսություն՝ հիմնված բանաստեղծական և երաժշտական գործոնների անքակտելի միասնության վրա: Ժամանակի ընթացքում պոեզիայի արվեստից հետոգետներուն վերածվելով երաժշտա - բանաստեղծականի՝ աշուղական արվեստում բացի տաղաչափական ձևերից հաստատվում են նաև դրանց համապատասխան եղանակների տեսակները: Վերջիններս այնքան են հարմարված համապատասխան տաղաչափական ձևի կառուցվածքին, որ շատ հաճախ անքակտելի են: Ընդունված է այս եղանակներն անվանել արևելյան, պարսկական կամ աշուղական դասական տիպական մեղեդիներ:

Ժամանակին աշուղասեր հասարակությանը քաջածանոթ էին այդ մեղեդիները, որոնք պայմանավորում էին ոչ միայն որոշակի տաղաչափական կառույց, այլև՝ որոշակի բովանդակություն: Երբեք ոչ մի աշուղ «գյոզալլամա» (սիրածի, յարի գովը) եղանակով չէր երգի խրատական երգ և հակառակը, «դաստանի» եղանակով սիրածին չէր գովարանի:

Ներկայում չափազանց դժվար է հստակ ճամաչել և բնորոշել աշուղական տիպական մեղեդիները: Ինչպես հայտնի է, աշուղական արվեստը բանավոր արվեստ է և բանավոր ավանդույթի կանոններով է կենցաղավարում: Եթե բանաստեղծական տեքստերը աշուղները գրի են առել իրենց դավթարներուն, և բանավոր փոխանցման դեպքում տեքստերը շատ քիչ են փոփոխվել կամ շատ փոփոխման և աղավաղման դեպքում հնարավորություն է լինում ծշտելու դրանք հեղինակի դավթարի միջոցով, ապա բոլորովին այլ և մեղեդիների հանգամանքը: Ծշտիտ տեղեկություններ աշուղական դասական եղանակների մասին կարող եր տալ հմուտ աշուղը

կամ այդ արվեստին կատարելապես գիտակ մեկը: Այսօր երկու դեպքն էլ, ցավոք, բացառվում է: Նախկինում էլ բոլորը, ովքեր տեսականորեն հետաքրքրվել են աշուղական արվեստով, հատկապես տաղաչափությամբ, երաժշտներ չեն եղել և հնարավորություն չեն ունեցել նոտագրել աշուղական մեղեդիները (Գ.Ախվերդյան, Գ.Լևոնյան, Շ.Գրիգորյան և ուրիշներ):

Այս գործում մեծ վաստակ ունեն հայ երաժշտության նշանավոր գործիչներ Կարա -Մուրզան, Կոմիտասը, Ն.Տիգրանյանը, Ռ.Մելիքյանը, Սպ. Մելիքյանը, որոնք, լինելով աշուղ Զիվանու ժամանակակիցները, ներկայացրել են միանգամայն հավաստի երաժշտական նյութ: Սակայն, ինչպես նշում է երաժշտագետ Ա.Փահլևանյանը Զիվանուն նվիրված իր հիմքածում «... առանձնահատուկ կերպով պետք է նշել ժամանակի լուսավոր դեմքերից մեկին՝ բազում շնորհներով օժտված Արշակ Բրուտյանին, որը Զիվանու առաջարկով հայկական նոտագրությամբ գրառել է 37 երգ և 5 երգվող հատված «Աշուղ Ղարիբ» և «Ասլի և Քյարամ» սիրավեպերից»: Դրանցից բացի Ա.Բրուտյանը աշուղական երգերի հարուստ ժառանգություն է թողել «Ռամկական մրցունջներ» ժողովածուի երկրորդ հատորում: Վերջինս իր մեջ ընդլուրում է քսան հայտնի ու համարյա մոռացված աշուղների 74 երգ, որոնցից 8-ը՝ երկու մեղեդային տարրերակով (ընդամենը՝ 82 նմուշ): Դրանցից Զիվանու, Խայաթի, Պայծառեի, Շերամի երգերը Ա.Բրուտյանը նոտագրել է իրենց իսկ ձայնից*: Նման հարուստ նյութի շնորհիվ հնարավոր է պարզել աշուղական երաժշտությանը վերաբերող կարևոր հարցեր, քանի որ դրանք, փաստուեն, վավերագրական արժեք ունեն: Ու եթե վերոհիշյալ անվանի երաժշտներից ոչ ոք աշուղական դասական մեղեդիներին չի անդրադեմ, այնուամենամիվ, նրանց թողած ժառանգությունը կօգնի ուսումնասիրողներին ճշգրտել աշուղական երաժշտության մեջ գործածվող դասական մեղեդիները և դրանց անվանումները:

Այս բնագավառում ուսումնասիրություններ է կատարել նաև երաժշտագետ Ա.Քոչարյանը: Իր «Դասական երգեր» ժողովածուի ծավալուն առաջարանում նա ներկայացնում է աշուղական արվեստի ծևակորումը, ընդհանրացված ծևով խոսում աշուղական երաժշտության կարևորագույն առանձնահատկությունների մասին: Ներկայացնելով տաղաչափական և տեխնիկական հիմնական ծևերն ու դրանց կառուցվածքը՝ Ա.Քոչարյանը տիպական եղանակների մասին ոչ մի տեղեկություն չի տալիս:

* Բոլոր տեղեկությունները տաղաչափական ծևերի մասին վերցված են Գ.Լևոնյանի «Աշուղները, նրանց արվեստը» գրքից:

Աշուղական արվեստով բավական լուրջ օբաղվել է երաժշտագետ Մ.Մանուկյանը՝ ներկայացնելով մասնավորապես խորհրդային շրջանի հայ աշուղների ստեղծագործական գործունեությունը, սակայն տիպական եղանակներին նա ևս չի անդրադարձել (3.):

Արժեքավոր տեղեկություններ է տալիս աշուղական արվեստի մասին Քր.Քուշնարյանը: Իր աշխատության մեջ (4.) գիտնականը մանրամասն խոսում է աշուղական արվեստի ծագման, նրա երաժշտական ակունքների մասին, ներկայացնում աշուղական արվեստի զարգացման ընթացքը պատմական տարբեր փուլերում, ընդհանուր տեղեկություններ տալիս ամենանշանավոր աշուղների գործունեության մասին: Անդրադառնալով աշուղական արվեստի երաժշտությանը՝ նա նշում է միայն հիմնական մեղեդային և ոճական առանձնահատկությունները:

Աշուղական արվեստի բնագավառում մեծ ներդրում ունեն հայ երգի նվիրյալներ Մ.Աղյանը և Շարա Տայանը, որոնց ջանքերով ի մի բերվեցին և հրատարակվեցին ժողովրդի մեջ բանավոր կենցաղավարած Սայաթ-Նովայի մեղեդիները: Այդ ժողովածուի առաջարանից հայտնի է դառնում, որ նրանց նույնական հուգել է աշուղական արվեստում ընդունված դասական մեղեդիների խնդիրը, որովհետև որոշ երգերի հեղինակները հայտնի չեն:

Որոշ չափով աշուղական տիպական եղանակների հարցին անդրադարձել է երաժշտագետ Ն.Թահմիզյանը, սակայն այնքանով, որ քանով որ դա առնչվում է Սայաթ-Նովայի մի քանի երգերի երաժշտագիտության կողմից կասկածի տակ առնվող հեղինակային պատկանելիության խնդիրին:


Եղանակների անունների և նրանց կազմության մասին կարելի է հետևողություն անել Սայաթ-Նովայի դավթարում նշված մեղեդիների անուններից ելեմելով, քանի որ, ինչպես Գր.Ախվերդյանն է գրում՝ «Սայաթ-Նովան առաջինն էր, որ արևելյան մայր և երկրորդական եղանակներուն ծանրացավ ու նրա հանգով գրեց հայավար երգեր» (5): Սայաթ-Նովան տալիս է մի քանի եղանակների անուններ (գյուլսանդան, յարանի, միրանի, մասյանի և այլն): Թե ինչ եղանակներ են դրանք, կարելի է փոքրիշատե պատկերացում կազմել՝ դատելով տրված երգերի մեջ հասած մեղեդիներից, թեև շատ հավանական է, որ դա ստույգ չլինի:

Աշուղական դասական եղանակներից ոչ մեկը հայերեն անվանում չունի, սակայն դա չի նշանակում, թե դրանք որոշակի թուրքական կամ պարսկական ծագում ունեցող եղանակներ են: Դնարավոր է, նույնիսկ, որ դրանց մի մասը հայկական ծագում ունենա, քանի որ հայտնի է, որ թուրքերն և պարսկերեն ստեղծագործող բազմաթիվ

հայ աշուղներ են եղել: Չմոռանանք նաև, որ աշուղական արվեստի գարգացման ողջ շրջանում այդ տարածքում իշխող լեզուն եղել է թուրքերենը: Բնական է, որ հայ աշուղները բոլորին հասկանալի լինելու նպատակով երբեմն նաև խուսափելով հետապնդումից մինչև, 20-րդ դարի սկիզբները ստեղծագործել ու երգել են թուրքերեն: Գր.Ախվերդյանը հավաստում է, որ «պարսից և թուրքաց մեջ աշուղներու մեջ մասը եղել են ազգով հայ, շատերն էլ հենց թուրքերեն են խաղ ասել, և անկարելի է, որ սրանք չըլլեն մուտել իրենցմեն հնարած եղանակներն ու ձևերը» (7.): Այս խոսքերի վառ ապացույցն է «քեշիշ - օղլի» եղանակը: Սա «ղոշմայի» ամենագեղեցիկ ու սիրված մեղեղիմերից մեկն է: Ինչպես հայտնի է, այս մեղեղին հորինել է իր ժամանակի հոչակավոր հայ աշուղ Դավիթ Քեշիշ - օղլին և այն կոչել իր անունով*:

Քեշիշ օղլի

Թ.Պոլոսյանի երգածից
Վերծանությունը՝ Լ.Թալանյանի



Աշուղական եղանակների «ազգային պատկանելիության» հարցը չափազանց վիճելի խնդիր է: Կոմիտասը գրում է, որ «...աշուղները կը գործածեն օտար եղանակներ՝ հարմարեցված հայերեն խոսքերու, զոր կը շարադրեն օտար՝ սովորաբար՝ արար, պարսիկ կամ թուրք տաղաչափական կանոններու համեմատ...» (9.): Այսինքն՝ նա

* Ի դեպ, «քեշիշ - օղլի» եղանակը տարածված է ոչ միայն հայ, այլև այլ ազգերի աշուղների շրջանում:

հատակ պնդում է, որ դրանք ըստ էության հայկական եղանակներ չեն: Սակայն Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արվեստի ինստիտուտի և Երևանի Պետական կոնսեկվատորիայի ֆոլկլորագիտության ամբիոնի գիտարշավների արդյունքները այլ բան են վկայում. ժողովրդի մեջ տարածված աշուղական մեղեղիմերում օտարածին ոչինչ չի զգացվում, ինտոնացիոն առումով աշուղական մեղեղիմերը երաժշտա լեզվական իմաստով մոտ են գեղջկական երգերին: Ցայտուն օրինակ է «գյողալլամա» մեղեղին, որը շատ մեծ տարածում ունի ժողովրդի մեջ ոչ միայն իրու աշուղական. այն հաճախ երգվում է նաև ժողովրդական տեքստերով:

Գյողալլամա

Ա. Փահլևանյանի ձեռագիր ֆոնդից
Ապարան 69, թիվ 63



Շնարավոր է, որ դա կախված է նաև նրանից, թե ինչ ժամանակների, տեղամքի և ազգաբնակչության հետ զորժ ունենք:

Ցուրաքանչյուր երևոյթ տարբեր վայրերում և տարբեր ազգերի մեջ ուրույն արձագանք է գտնում. ժողովրդի մեջ պահպանվում է այն, ինչն ավելի հարազատ է իր ակունքներին և ավելի մնայուն է իր կենցաղում: Հավանաբար Կոմիտասը նկատի է ունեցել աշուղական այն երգերը, որոնք տարածված են եղել Թուրքիայի տարածքում և

որոնք, բնականաբար, տարբեր կլիմեին այժմյան Հայաստանում տարածված աշուղական երաժշտության ինտոնացիաներից: Այս հարցին վերջնական և սպառիչ պատասխան կարելի էր տալ միայն այն դեպքում, եթե մեր ձեռքի տակ լինեին Թուրքիայի տարածքում կենցաղավարող՝ թուրք աշուղների երգերը, որոնք հնարավորություն կընձեռեին համեմատական ուսումնասիրություն կատարել հայկական և թուրքական աշուղական արվեստի երաժշտական լեզուների միջև: Հավանաբար, 20-րդ դարի հայ աշուղական երաժշտական լեզվի «հայացման» մեջ էական դեր է խաղացել նաև Զիվանու նախաձեռնած աշուղական արվեստի բանաստեղծական տեքստերի հայերեն թարգմանությունը:

Ժամանակակից հայ աշուղական արվեստում գոյություն ունեցող դասական մեղեդիների բացահայտումը, դասդասումն ըստ տեսակների մեծ դժվարություն է ներկայացնում: Չափազանց մեծ է ինֆորմացիայի պակասն այդ բնագավառում: Տիպական բազմաթիվ եղանակներից մեզ հասել են միայն անուններ, լավագույն դեպքում նրանց որոշ առանձնահատկությունների նաև մասին վկայող տեղեկություններ: Աշուղական դասական մեղեդիների նաև որոշ տեղեկություններ տալիս է Գ.Լևոնյանը: Նա նշում է, որ տաղաչափական ձևերի հետ կապված մայր եղանակների թիվը հասնում է 50-ի, նաև՝ կան այնպիսիք, որոնք երգվում են առանց բառերի: Տաղաչափական ձևերից միայն մի քանիսն ունեն առանձին եղանակներ: Դրանցից երեքը՝ «սեմային», «մյուստեղետը» և «շարքին» ունեն մեկական մեղեդի, իսկ վեց այլ ձևեր, բացի հիմնական եղանակներից ունեն նաև ուրիշ եղանակներ կամ տարբերակներ (6. էջ 60): Ամենից շատ եղանակներ ունեն «ոյուրեթիթն» ու «ղոշման», քանի որ դրանք աշուղների ամենասիրած ձևերն են: Գ.Լևոնյանի տված տեղեկությունները շատ արժեքավոր են, սակայն նշում են միայն մեղեդիների անունները, կոնկրետ տաղաչափական ձևին պատկանելը, ընդհանուր բնույթը, բովանդակությունը: Կոնկրետ մեղեդային օրինակներ, որոնցով հնարավոր լիներ առաջնորդվել, նա չի բերում:

Բարեբախտաբար, մեր օրերի մի քանի աշուղների հիշողության մեջ պահպանվել են ավագ սերնդի աշուղներից՝ Հավասուց, Շահենից, Աշխույժից և ուրիշներից սովորած մի քանի դասական մեղեդի: Աշուղական արվեստի գիտակ և վարպետ կատարող Թովմաս Պողոսյանը մեզ տրամադրեց իր ուսումնասիրությունների ժամանակ ձեռք բերած որոշակի մեղեդային օրինակներ, որոնք օգնում են

կողմնորոշվել հետազոտական աշխատանքի ընթացքում՝ համեմատելով դրանք ձեռքի տակ եղած տիպական եղանակների տեսակների հետ:

Հատ արժեքավոր ու յուրօրինակ ինֆորմացիոն աղբյուր են նաև երաժշտագետ Ալինա Փահլանյանի անձնական ձեռագիր ֆոնդի նյութերը, որոնք վերցված են Ապարամի շրջանում ԳԱ Արվեստի ինստիտուտի 1948 և 1969 թվականներին կատարված ֆոլկլորային գիտարշավների նյութերից: Սրանց մեջ շատ են աշուղական երգերի այնպիսի օրինակներ, երբ ինֆորմանտն իր երգին տվել է աշուղական որևէ դասական մեղեդու անուն: Ընտրելով դրանցից շուրջ 70 նմուշ, ուսումնասիրություններ կատարելիս մենք ենթարկեցինք դրանք մանրանան վերլուծության, տիպարանական քննության և ստորաբաժանման:

Ուսումնասիրական աշխատանքը բարդանում է նաև այն պատճառով, որ իին ժամանակներից ի վեր ձևավորված աշուղական մոդել - եղանակները ժամանակի ընթացքում միշտ չեն, որ պահպանվել են իրենց նախնական տեսքով:

Դրանցից կարող էին մնալ լոկ որոշակի տիպական դարձվածքներ, որոնք Հայաստանի տարբեր շրջաններում տարածվել են, գոյատևել, զարգացման ենթարկվել և նոր տեսք տվել աշուղական դասական մեղեդուն: Այս վերկածը ստուգելն այժմ բավական դժվար խնդիր է և երկարատև «ակերպմներ» է պահանջում, որովհետև նախ պետք է վերականգնել աշուղական տիպական մեղեդիների դասական տեսքը, որպեսզի կարելի լինի հետևել այդ մեղեդիների զարգացման ընթացքին և միտումներին: Եվ որովհետև մեր ձեռքի տակ գտնվող երգային օրինակներն այնքան են անհատականացված, որ դրանց մեջ տիպական մեղեդին կարող է չճանաչվել, ուստի փորձել ենք դրանց բերել յուրաքանչյուր երգի մեղեդային պարզեցված մոդելը, որից հետո, ելնելով դրանց մեջ եղած լադայինտոնացիոն և կառուցվածքային առանձնահատկություններից, նմանություններից և տարբերություններից, խմբավորել ենք երգային օրինակներն ըստ տեսակի:

Չնայած եղանակները տարբեր են լադային, կառուցվածքային և մեղեդային զարգացման առումով, այնուամենայնիվ կան ոճական և զարգացման որոշ առանձնահատկություններ, որ հատուկ են բոլորին: Բոլոր մեղեդիներում պահպանված է հայկական երգաստեղծությանը բնորոշ ձայնակարգային խիստ կենտրոնաձիգ բնույթը:

Հիմնականում մեղեդու զարգացումը սկսվում է ձայնակարգի օժանդակ հենակետից, կարծես ցուցադրելով երաժշտական «գործողության» բարձրակետը, յուրօրինակ հանգույցը, որից հետո մեղեդին ալիքաձև շարժմամբ աստիճանաբար իջնում է դեպի հիմնահնչյուն: Հանդիպում է նի հետաքրքիր օրինաչափություն ևս. Երբեմն մեղեդին ավարտվում է առանց հիմնահնչյունը հաստատելու: Դա կարելի է բացատրել հետևյալ հանգամանքով. տիպական եղանակներով երգվում են աշուղական սիրավեպերը, որոնցում երգին հաջորդող պատմությունը սկսելու համար մեղեդին մնում է կարծես անավարտ՝ հետագա շարունակության ակնկալությամբ: Շատերը հեքիաթից դուրս այդ եղանակով երգելիս վերջում ավելացնում են նի փոքր վերջավորող հատված, որում մեղեդային շարժումը տարվում է դեպի գլխավոր հենակետ՝ այդպիսով դարձնելով այն ավարտուն:

Աշուղական դասական մեղեդիների հայտնաբերման և դասակարգման խնդիրը առաջնային հարց է հայ երաժշտական աշուղագիտության մեջ, քանի որ դրա շնորհիվ հնարավոր կլինի հստակեցնել հայերի երաժշտական կենցաղում կիրառվող տիպական մեղեդիների ողջ համակարգը, ուսումնասիրել հայ աշուղների երգաստեղծության արվեստը, հայտնաբերել բազմաթիվ հայ աշուղների ստեղծագործությունների առայժմ անհայտ երաժշտական պատկերը՝ հիմնվելով նրանց դավարներում հանդիպող նշումների վրա:

Աշուղական տիպական եղանակների համակարգի հստակեցումը՝ լույս սփռելով այս արվեստի կարենոր կողմի՝ երաժշտական մարմնավորման վրա, թույլ կտա նաև առաջ քաշել և լուծել այլայլ չափազանց էական խնդիրներ:

Ծանոթագրություններ

1. Թահմիզյան Ն., «Սայաթ-Նովան և հայ գուսանա-աշուղական երգ-երաժշտությունը», «Դրագարկ», Փասադենա, 1995:

2. Լևոնյան Գ. «Աշուղները և նրանց արվեստը», Հայպետհրատ, Երևան, 1944:

3. Փակելամյան Ա., «Զիվանին՝ երաժիշտ - երգաստեղծ», Զիվանու ծննդյան 150 -անյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Հայ-

կական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան 1996:

4. Քուշնարյան Բր., «Հայ մոնողիկ երաժշտության տեսության և պատմության հարցեր», Լենինգրադ, 1958 (ռուս):

5. Ախվերդյան Գր., «Գուսանը Ա», Սոսկվա 1852, Առաջարան:

6. Կոմիտաս - «Հայ գեղջուկ երաժշտությունը», հրատ. Կոմիտասյան համձնաժողովի, Փարիզ, 1938:

Lilit Talanchyan

The Classical Tunes in Ashough Musical Art

Summary

The article deals with the most important features of ashugh art based on the taghmetrical forms of ashughic poems and the rules of their application. The primary task is the problem of restoration of ashughic classical tunes, which enables to reveal rather essential features of ashugh music.

ՂԱՍՄԻԿ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՉԻՆ ՉԱՅԻՑ ԲԱՆԱԿՈՒՄ

Համաշխարհային երաժշտության պատմության հնագույն շերտերի մեջ են ձևավորվել ռազմական իրադարձություններին առնչվող երաժշտական ավանդույթները: Զերբազատվելով ծիսա-հավատալիքային պատիճից (օրինակ՝ որսի ծիսապարեր), ռազմի երգն ու նվագն ամենատարբեր դրսերումներով են ներկայացել թե՝ ռազմական պարերում և թե՝ բուն պատերազմական գործողությունների ընթացքում:

Իբրև կարևոր բաղադրիչ տարր, հայոց միապետների բանակներում ևս հնչել են նվագարանային կոչ-մեղեդիներ, որոնց գործառույթը պայմանավորվել է մարտական գործողության որոշակի իրադրությամբ: Այս ոլորտին ենք անդրադարձել ներկա հրապարակնան մեջ, քննության առնելով V-XVդդ. հայ պատմագրության տվյալները՝ իբրև հավասար և արժեքավոր աղբյուր: Թեև հիշատակված նյութը վերաբերում է հիմնականում միջնադարին, այդուհանդերձ ակնհայտ է, որ ավանդույթը որպես հելլենիստական մշակութային արժեքների համակարգի արգասիք, ժառանգված է և, թվում է, անդրադարձնում է համընդհանուր բնույթի երևույթներ: Այն է ռազմի դաշտում հնչող նվագարանային ազդանշան-մեղեդիների միկնույն համակարգի գործառույթը տարբեր ժողովուրդների բանակներում: Միկնույն ժամանակ, պատմագրական աղբյուրներից անհնար է դուրս բերել բուն հնչող նյութի երաժշտարտահայտչական բնորոշչները: Չետևաբար, հնարավոր ենք համարում ենթարել, որ համընդհանուր կոչ-մեղեդիներից զատ հիշյալ ժամանակաշրջանում կարող էին հնչել նաև տվյալ ժողովորդի երաժշտամտածողությանը բնորոշ մեղեդիական դարձվածքներ:

Պատմագրական տվյալները հավաստի աղբյուր են հիշյալ ոլորտում կիրառված **նվագարանների** տեսականի* և առանձին դեպքերում՝ դրանց **կառուցվածքի** և **հնչերանգի** առանձնահատկությունների ուսումնասիրնան համար:

Այդ վկայությունները բնորոշվում են ինֆորմացիայի բազմազանությամբ, որի շնորհիվ կարելի է վստահությամբ ասել, որ ռազմա-

կան տարբեր իրավիճակներում հայոց բանակում հնչել է համապատասխան փողային նվագարաններով կատարվող երաժշտություն: Այսպես, Զենոր Գլակը գրում է ճակատամարտի սկիզբն ազդարարող **պատերազմական** փողերի մասին, Կվառս գյուղաքաղաքի քուրմ Արձանի դեմ Գրիգոր Լուսավորչի մղած զինված պայքարի նկարագրության դրվագներում. «Եսկ սրբոյն Գրիգորի առեալ գիշխանն Արծրունեաց, և գիշխանն Անձնացեաց, և գիշխանն Անգեղ տան, և սակաւ ինչ զօրու իբրև արս երեքհարիւր, ելեալ յերրորդ ժամու ընդ բլուրն՝ ուր Արձանն էր: ... Եւ իբրև մերձ եղեն ընդ եւս զար ՚ի վերին, յառաջ մատուցեալ Արձանն ու Շեմետր, և հնչեցուցին զինուս պատերազմին, և յանդգնաբար յարձակեցան ՚ի վերայ» (1. էջ 45): Ապա՝ «Արդ իբրև հարստացան երկորին կողմանքն, և էին 6940 և վեց արք քրմացն, իսկ 5000 և 80 զօրք իշխանացն Յայոց, ապա հնչեցուցին **զինուս** պատերազմացն» (2. էջ 51): IV դարում հայոց Տրդատ թագավորի և հումաց բանակների ճակատամարտի նկարագրության մեջ նշված է. «Զի զստին կողմ գեղջըն պաշարեցին հետևակըն, և զներքինն հեծեալքն: Եւ սկսան հնչեցուցանել **զինուս** պատերազմաց, և բնդիւն սաստիկ շուրջանակի» (1. էջ 64, 180, 186):

Նույն փողերի մասին են հիշատակել նաև Յովիհան Մամիկոնյանը և Սեբեոսը: Այսպես. VII դարում հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ Յովիհան Մամիկոնյանը գրում է. «Եւ իբրև զնացին յեզր գետոյն Մեղտեայ, յայս կոյս իջոյց զնոսա ի քում առեալ և ինքն պատրաստի արարեալ զդարանակալսն հրամայեաց ծառայիցն կտրել զերիվարսն արաւտի պատճառանաւք և զնոսա յանհոգս արարեալ յանկարծակի հնչեցուցին զինուսն յետոյ և յառաջոյ, և ՚ի մէջ առին զնոսա» (2. էջ 222): Նույն ժամանակաշրջանին վերաբերող հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ նշված է. «Եւ իբրև խթեցին զօրիսն սրով և արկին ի բանակն, և ինքնեանք զիետ մտել **զինուս պատերազմին** հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտորել» (3. էջ 101): Պարսիկների դեմ Վահան Մամիկոնյանի դեկավարած ապստամբության նկարագրության մեջ կարդում ենք. «Ընդդեմ սորա աճապարեալ Վահան սպարապետ և Յազարաւ ընտիր վանելոց, կարգին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, և յարձակին ի միմեան ՚ի ծայյ փողոց տագնապաւ ի դաշտին Գերանա» (2. էջ 186): Գագիկ Բագրատունու որդիների՝ Աշոտի և Յովիհաննեսի երկապառակտության արիթով պատմագիրը նշում է. «Եւ իբրև լուաւ Յովիհաննես զգալ Աշոտոյ եղբօր իւրոյ, հրամայեաց **փող պատերազմի** հարկանել» (2. էջ 190):

* Զենոր Գլակ, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889:

Որոշ վկայություններում հիշատակվում է **ճակատամարտի** ավարտն ազդարարող փողերի մասին: Զենոր Գլակի աշխատության վերը նշված դրվագներից մեկում նշվում է. «Արդ իբրև նեռավ Ղեմետը՝ ի նոյն պատերազմին, հնչեցոյ իշխանն Սիւնեաց զիոռ պատերազմին՝ ի խաղաղութիւն և լուցին երկոքին կողմանքն ՚ի կոտորելոյ զմիմեանս» (1. էջ 90):

Պատերազմական փողի մասնակցությունը նաև ճակատամարտի ընթացքում հիշատակել են Հովհան Մամիկոնյանը և Թովմա Արծրունին: Այսպես. VII դարում տեղի ունեցած հայ-պարսկական ռազմական ընդհարումներից մեկի նկարագրության մեջ Հովհան Մամիկոնյանը գրում է. «Եւ յամենայն կողմանց ի վերայ հարձակեցան, և ի մէջ առին զօրոն պարսից: Եւ խմբեցաւ պատերազմն այնչափ, որ ոչ գոյն հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն **ի ծայն փողըն** և ի տեսս դրոշացն» (2. էջ 200): Մեկ այլ դրվագում՝ «Եւ իբրև խթեցին զջորիսն սրով և արկին ի բանակն, և ինքեանք զիետ **մտել զիոռ պատերազմին** հնչեցուցին և առ ձեռն սկսան կոտորել» (2. էջ 210): 851թ. հայ-արաբական մարտերից մեկի նկարագրության մեջ Թովմա Արծրունին հիշատակում է. «Մինչ Նորա... ընդդեմ միմեանց ճակատեալ կազմին զրազմն, և **փողըն գոչէին և դրօշըն** տարածին» (4. էջ 118):

Դատելով առանձին վկայություններից, ռազմական փողերի քանակը հայոց բանակում բավական մեծ է եղել: Ըստ Եղիշեի, հայկական յուրաքանչյուր զրագունդ մի **քանի փողիար** է ունեցել: Ավարայրի ճակատամարտի նախօրյակին պարսից զրավար Սիհրմերսերը Կասակին հարցրել է. «Քէ քանի գունդ զօրոսն բաժանիցեն, և որ՝ ի նոցան սաղարդ լինիցին, և որ՝ զօրագուլիս յորմէ կողմանէ յրազմ մտանիցէ, և ...քանի **փողիարը՝ ի** մէջ գնդին ծայնիցեն» (5. էջ 74):

Ներկայացված նյութից ակներև է դառնում պատերազմական փողի գործառույթի բազմազանությունը, ինչից ենթադրելի է նաև համարժեք հնչող նյութի առկայությունը: Այստեղից էլ օրինաչփորեն ծագում է այն հարցը, թե ռազմական այս կամ այն իրադարձության ժամանակ բանակում արդյո՞ք միևնույն փող նվազարանն է գործածվել: Քննելով հարցը, անհրաժեշտ ենք համարել անդրադարձանալ գրավիր այն հիշատակություններին, որոնցում տեղ են գտել նաև հակառակորդ բանակների նկարագրությունները: Այստեղ կարևորել ենք երկու իրողություն. նախ՝ հիշատակվող նվազարանների բացառապես հայերեն անվանումները, և ապա՝ այդ նույն նվազարանների հիշատակումները հայ իրականությանը առնչվող այլ նկարագրություններում: Այստեղից էլ այն մեծ հավանականու-

թյունը, որ հիշատակված ռազմի նվազարանները կիրառվել են նաև հայոց բանակում: Նշենք նաև հակառակ պարագայի մասին: Այսպես. նույն «պատերազմական փողերի» մասին նշված է նաև հունաց բանակում: Հայոց Տրդատ թագավորի երիտասարդ տարիներին անդրադառնալով, Ագաթանգեղոսը գրում է հունական բանակում նրա բացագրծությունների մասին. «Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ **ի ծայն փողոյ** տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև հանդիման թշնամեացն» (6. էջ 29): Բյուզանդական բանակի IX դարին վերաբերող նկարագրության մեջ Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Եւ ինքն թագաւորն ցամաքան եկեալ մերձենայ ի բանակն... և ինչեցուցանել հրամայէր **պատերազմական փողսն**» (7. էջ 249): Մատթեոս Ուռհայեցին, պատմելով 1055թ. Տուղթիլ Սուլթանի արշավանքի մասին, գրում է. «... և յարուցեալ բազմութեամբ զօրօք իւլովք հասանէր ՚ի քաղաքն Մամակերու: ... Իսկ յորժան բաժանէր առաւօտն, հրամայէր հարկանել **պատերազմական փողսն**» (8. էջ 264):

Այժմ անդրադառնամբ փողերի տեսակներին վերաբերող հիշատակություններին: Եղիշեն նշում է **մեծ փող** և **մեծ զալարափող** նվազարանները. «Նշան բաշխէր, դուշ արձակէր, և ՚ի ծայն **մեծի փողոյն** պատրաստ հրամայէր լինել» (4. էջ 90): Ապա՝ «Զայն իբրև ետես Մուշկան Նիւսալաւուրտն, մնայր գազանացն Արտաշրի, որ ՚ի վերայ գազանացն նստէր ՚ի բարձր դիտանոցին և ... ՚ի ծայն **մեծ զալարափողոցն** գիւր գունդսն ստիպէր, և յարաջանարտիկ զօրօն զնա ի մէջ փակէր» (4. էջ 92):

Կայսերալուրք փողեր է հիշատակել Թովմա Արծրունին, IV դարում Մերուժան Արծրունու դեմ Սմբատ Բագրատունու տարած հաղթական ճակատամարտի նկարագրության մեջ. «Ընդդեմ զօրաժողով եղեալ Սմբատ Սպարապետ Հայոց որդի Բագրատատայ Բագրատունու, ունելով ընդ իւր զգօրսն Յունաց բազմամրդին վահանաւորաց և դուշաց սաւառնացելոց, և **փողը** կայսերալուրք» և գունդք վարելոցն վաշտիցն շուրջ փակեալ զՄերուժաննեան զնդիւն, զի մի ծողութելին աճապարհցի» (4. էջ 24): Մատթեոս Ուռհայեցու Պատմության ձեռագրերից մի քանիսում պատերազմական **փողի** փոխարեն համոփառ է **պատերազմական շեփոր** անվանումը:

Քննվող գրավոր աղբյուրներում տեղ են գտել նաև բացառիկ արժեք ներկայացնող հիշատակություններ, որոնք վերաբերում են ռազմի փողերի նկարագրին, մասնավորապես՝ հնչերանգին և կառուցվածքին: Արտաշես Ա-ի օրոք հայոց բանակում, ըստ Մովսես Խորենացու հնչել են աղնձե **փողեր**. «Եւ Սմբատ հրամայէր **զփողսն պղնձիս** հնչեցուցանել և յարաջեալ զճակատն իւր, իբրև

արծիւ յերամս կաքաւուց խոյանայր» (9. էջ 138): Նույնը՝ նաև Արտաշես Ա-ի հուլդարկավորության նկարագրության մեջ. «...և առաջի պղնձիս **հարկանելով փողս**, և զենիս՝ ձայնարկու կուսանք, սևագգեստ և **աշխարող** կանայք, և զիետ՝ բազմութիւն ռամկին» (9. էջ 250):

Իրենց հնչերանգով այլ գործառույթ են կրել եղջերափողերը: Այսպես. Շապուհ Բագրատունին, նկարագրելով VIII դարում արարական գորաբանակներից մեկը, նշում է. «**Հնչեցուցին զփողն եղջիրէ** ի բանակն անօրինաց» (10. էջ 23): 1098թ. Անտիոքի գրավման պատմության մանրանասների մեջ Սատրեսու Ուրիայեցին հատուկ նշել է. «... և բացեալ ի պարիսպն և զկլայեած դուռն, և ամենայն բանակն Ֆռանկաց մտին ի քաղաքն Անտիոք. և ընդ առաւոտն միարան հնչեցուցին **զփող** եղջերացն ամենայն օրոքն» (8. էջ 264):

Պղնձեն և եղջյուրե փողերի հնչերանգային տարրերությունները դարձյալ հնարավոր է դիտարկել փող նվագարանի գործառույթի բազմազանության շրջանակներում: Նույնը կարելի է նշել նաև այդ նվագարանների կառուցվածքային առամձնահատկությունների մասին: Մովսես Կաղանկատվացին հիշատակում է **բազմաձայն փողեր**: Աղվանքի թագավոր Վաչեին ուղղված նամակում ասվում է. «Եկն եհաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց, ահաւոր գազանօք, խառնադրոշն նշանօք, բազմաձայն **փողովք, գալարափող** գոչմամբ, անտառախիտ նիզակօք» (11. էջ 17):

Բազմաձայն բնորոշումը կարելի է մեկնաբանել և իրքև նվագարանների քանակի ընդգծում, և իրքև հնչողության բազմաձայն կերտվածքի նշում: Յամանան եզրակացությունների ենք հանգում նաև Սերեսոսի հիշատակություններից մեկի բննության մեջ: Այսպես. 607թ. Սմբատ Բագրատունու և պարսից Խոսրով արքայի համագրծակցությանն անդրադառնալով, պատմագիրը նշում է. «Յայնժամ տայ նմա արքա գտանուտերութիւն՝ որ անուանեալ կոչէր Խոսրով Շում...: Տայ նմա **զփող չորեքձայնեանս** և պահապան դրանն նորայ ի հետեւակաց արքունի» (3. էջ 101): Այս դեպքում ևս չորեքձայնեա փողերը կարող են ստուգաբանական տարրեր մեկնությունների ենթարկել: Կարելի է ենթադրել, որ փողերից յուրաքանչյուրը արձակել է չորս հնչյուն, կամ ունեցել է չորս ձայնանցք: Յնարավոր է դրանք դիտել նաև որպես մեկ հնչյուն արձակող չորս փողերի խումբ և այլն: Տվյալ դեպքում փողերի չորեքձայնեա լինելը դրանց որոշակի տեսակի մասին է վկայում: Նույնը կարելի է ասել նաև **պղնձե փողերի, եղջերափողերի, գալարափողերի**, ինչպես նաև **շեփորի** մասին: Յնարավոր է, որ փող անվանումը պատմագիրների մոտ հաճախ ընդհանրացված անվանումի ինաստ է ունեցել և օգ-

տագործվել որպես յուրահատուկ տերմին:

Յամալրելով նվագարանների տեսականին վերաբերող պատմագրական բնութագրումները, նշենք, որ դրանցից մի քանիսուն հիշատակվում են նաև տարրեր նվագարաններից (**փող, բմբուկ, քնար, ջնար**) բաղկացած նվագախմբերի մասին: IX դարում հայ-արարական ռազմական ընդհարումներից մեկի նախօրյակին, ըստ Թովմա Արծրունու, արաք բագավոր Զափրը «խնդրէ և տեղեկութիւն թե քանի՞ դրոշը են, և կամ քանի՞ նշանը, և կամ քանի առաջս գորքն բաժանիցին, և կամ քանի՞ **փողը** գոչիցին, և կամ **քանի՞ բմբուկ** դափիցեն» (4. էջ 211): Արաք զորապետ Բուղայի արշավանքներից մեկի նկարագրության մեջ ասվում է. «... նշանս կանգնեալ և **քնարը** հնչէին, և թմբուկըն դափիէն» (4. էջ 211): Նույն ճակատամարտի նկարագրության մեջ նշվում է. «Յայնժամ հրաման ետուն ամենայն օրացն ելանել ի պատերազմ. և ահա աղաղակ և **փողը և քնարը և ջնարը**, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն օրացն» (4. էջ 296):

Ընդհանուր առնամք բննվող ոլորտը դիտարկելով երևույթի անբողջական համայնապատկերի մեջ, նշենք, որ բացի նվագարանային երաժշտությունից, ռազմական իրադարձությունների ժամանակ և առհասարակ հին հայոց բանակում հնչել են նաև այլ ժամրի և տիպի ստեղծագործություններ (իմա՝ ժողովողական երգեր, հոգևոր երգեր, պարեր և այլն): Քննությունը սոսկ նվագարանային երաժշտության ոլորտում մասնավորեցումը ակնկալում է այլ աղբյուրների՝ հնագիտության, կերպարվեստի (հատկապես՝ մանրանկարչության), ինչպես նաև հարևան ժողովուրդների համապատասխան և համարժեք աղբյուրների տվյալների համադրական ուսումնասիրում: Պատմագրական նյութը լուրջ հիմք է տալիս հայոց բանակում կիրառված գործիքային երաժշտությունը արժևորել իրքև ժամանակի երաժշտարվեստի մի ինքնատիպ ոլորտ, որտեղ բազմապիսի գործառույթի մեջ են դրվել ինչպես մասնահատուկ, այնպես էլ ավանդական նվագարաններ:

Պետականության կորուստը միակ պատճառն էր, որ հայոց հինավուրց ռազմակոչերը մնացին լոկ մատենագրական հիշատակություններում՝ իրքև ազգային բանակը խորհրդանշող յուլորինակ տարր:

Ծանոթագրություններ

1. Այսուհետև բոլոր ընդգծումները մերն են (Հ.Ս.)
2. **Հովհան Սամիկոնյան**, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941:
3. **Սեբես**, Պատմութիւն ի Յերակն, Թիֆլիս, 1912:
4. **Թովմա Արծրունի**, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:
5. **Եղիշե**, նշվ. աշխ.:
6. **Ազարանգեղոս**, Պատմութիւն Յայոց, Տիֆլիս, 1909:
7. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885:
8. **Սատրես Ռևհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
9. **Մովսես Խորենացի**, Յայոց Պատմութիւն, Տիֆլիս, 1913:
10. Պատմութիւն **Ծապիոյ Բագրատունոյ**, Եջմիածին, 1921:
11. **Մովսես Կաղանկատվացի**, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, Մոսկվա, 1860:

Hasmik Stepanyan

The Musical Instruments in the Ancient Armenian Army

Summary

Original manifestations in the Armenian medieval music represent the calls and exclamations to making on military action time. According to the Armenian Middle-Ages history, during the strategic events special melodies could be heard by the original musical instruments.

Different kinds of drums, horns and trumpets are mentioned. The context tells us that besides the musical instruments of the different circles, of strategic order instruments have also been used.

Դայկական ժամանակակից երաժշտություն

Современная армянская музыка

НАРОДНЫЕ ИСТОКИ ТВОРЧЕСТВА РУБЕНА АЛТУНЯНА

Ощущение народного, национального заложено в любом человеке независимо от того, осознает и принимает он этот факт или же отрицает его. Приходит время, когда сознательно или интуитивно национальный фактор – образы, звуки, краски, ментальность, темперамент несомненно дают о себе знать. Люди искусства ощущают национальный фактор остree, ярче и глубже, и без преувеличения нуждаются в народном творчестве, ибо принимают его как первоисточник. Каждый мастер ищет и находит в национальных источниках, в прошлом и настоящем своей страны что-то свое: художник – мир краски, архитектор – стиль и форму, писатель – колорит образов и типажей, музыкант – специфику языка, выраженную в народных песнях и танцах, обрядах и традициях. Пытаясь это преломить и объединить с современными тенденциями развития музыкального искусства, которые стали достоянием всего мира, композиторы выходят на качественно новый уровень и занимают достойное место как в своей стране, так и далеко за ее пределами.

Связь композитора с фольклором (1.) – специфическая и даже личная категория, где национальное мышление может проявляться по-разному, в зависимости от того, непосредственно цитируется или имитируется народный материал. Если окунуть единным взглядом путь, проийденный профессиональной армянской музыкой с самой ранней стадии ее развития вплоть до наших дней, мы не найдем ни одного композитора, который прямо или опосредованно не обращался бы к народному творчеству (2).

В 60-ые годы (3.) – время нововведений и экспериментов, когда национальная музыка находилась на перекрестке нового, современного направления и устоявшегося традиционно классического, существовало три основных источника, питающих творчество армянских композиторов: это европейская класси-

ческая музыкальная культура, национальная культура с прочной опорой на народное творчество и богатый арсенал композиционных и технологических средств, являющихся приоритетом музыкального искусства XX века. Однако, как отмечает исследователь современной музыки С.Саркисян, “новое поколение принесло с собой и новые взгляды на творчество, искусство в целом, обновленное понимание фактуры, звука, цвета, линии, динамики, инструмента, самоу художественной формы” (3.С.10) Три отмеченных выше источника питаю и творчество Рубена Алтуняна, глубокого знатока армянского фольклора, для которого народное искусство является основным фактором сочинения *.

Р.Алтунян (род.1939) - глубоко национальный композитор, влюбленный в историческое прошлое своего народа, его обряды и традиции, духовное наследие. Безусловно - художник-патриот, сознающий острую диалектичность актуальной ситуации, пытающийся объективно отразить ее посредством своего творчества. Алтунян принадлежит к числу тех композиторов, для которых национальные традиции не столько отдельно взятые элементы, сколько основная почва, на которой базируется его искусство в целом. Помимо привнесения народного материала в собственные сочинения, композитор уделяет большое место обработкам традиционных народных мелодий, что не столь популярно в современной композиторской среде. Следовательно, произведения Алтуняна, во многом вбрав в себя национальную природу фольклора, в свою очередь, обогастили жанр обработок армянской традиционной музыки.

Творчество Алтуняна условно можно разделить на две основные группы:

- 1) собственные сочинения;
- 2) обработки народных и народно-профессиональных мелодий для разных вокально-инструментальных ансамблей.

Затрагивая проблему народного начала в творчестве, мы хотели бы провести определенный водораздел между категориями “народного” и “национального”. Ведь художник, не прибегая к народным образцам, может иметь ярко выраженное нацио-

* Творчество Р. Алтуняна не становилось темой специального исследования, однако существует ряд статей, посвященных отдельным произведениям автора (4.С.138,5,6.).

нальное мышление, и наоборот, цитируя народный первоисточник, - сохранять европейский менталитет. Творчество Алтуняна – органичный сплав народного и национального, где каждая их грань реализуется по-своему. Народный принцип выявляется непосредственно в обращении к материалу фольклора, характерным народным инструментам, в обращении к жанру обработки фольклорной музыки, т.е. вырисовывает внешний пласт народного творчества.

Национальное же затрагивает более глубинные проблемы, связанные с художественно-историческим мировоззрением, ладо-интонационной и ритмической системами, а также принципами изложения и развития музыкального материала. Интересно по этому поводу замечено Н. Шахназаровой: “Каждая национальная музыкальная культура открывается перед нами в двух измерениях, имеет две точки отсчета исторического процесса. Одно измерение более глубокое и хронологически более отдаленное, - музыка, предшествующая композиторскому творчеству, том слой, в котором генетически заложено все дальнейшее развитие музыкального сознания нации. В любой своей разновидности, будь то фольклор или различные формы профессионализма, искусство светское или духовное, плод коллективного творчества или импровизации отдельных выдающихся представителей - в исторической перспективе этот пласт откладывается в нашем сознании как музыкальный “дух” нации. Он предстает как самовыражение национального, своеобразный его критерий, составляет важнейший компонент классической традиции, фундамент, на котором впоследствии выстраивается многоэтажное здание композиторского искусства” (7.).

Известны три принципа использования фольклора в профессиональном творчестве:

1. Цитирование, когда берется мелодия целиком, и средствами гармонии, инструментовки, полифонии обогащается, достигая нового художественного качества.

2. Коренная разработка целостной мелодии или же ее характерного тематического зерна.

3. Воссоздание мелодии исходя из строя музыкального языка, ладо-гармонической и интонационной сферы оригинала.

Эти три принципа в равной степени представлены в творчестве Алтуняна, и каждый, вытекая один из другого, создает

сложное переплетение и взаимодополнение. Метод цитирования употребляется композитором достаточно часто. В Первом струнном квартете (1962) Алтунян использует мотив армянской песни «Արի Մանա» (“Ари Манана”), во втором квартете (1995) - армянскую городскую песню «Սիրեցի յար տարշի» (“Сиреци, ярс таран”), в картине-поэме «Թափուր անդաման» (“Пустующая нива”) для дудука, зурны и камерного оркестра (2000) - зажигательные танцы «Շալախ» (“Шалах”) и «Քոչարի» (“Кочари”).

Однако ни один подлинный музыкальный образец не есть слепое перенесение песни или танца в контекст произведения. Народный материал интегрируется, ассимилируется в произведении автора и получается тот тематический и ритмо-интонационный сплав, в котором нуждается композитор. При этом никогда не изменяется образный характер первоисточника, сохраняется чистота интонирования и его национальная характерность. Цитата перерастает в музыкально-тематический материал, на основе которого и строится произведение. В большинстве случаев цитата является носителем основной идеи, порой выступая как лейттема произведения. Ярким примером к сказанному является Второй струнный квартет композитора, где армянская городская песня «Սիրեցի յար տարշի» (“Сиреци, ярс таран”) и есть основная тема, точнее сказать, лейттема, пронизывающая музыкальную ткань всей композиции. Проходя четырежды в наиболее важных драматургических этапах квартета, она преломляется в разных эмоционально-образных плоскостях: от кантиленно-нежного до экспрессивно-дramатического.

В связи с проблемой нового тематизма, взаимоотношений композиторского и фольклорного творчества Г. Головинский отмечает: “Думается, что у композиторов, чье обращение к фольклору вполне очевидно (пусть степень осознанности различна), результаты этого обращения запечатлеваются в первую очередь именно в тематизме. Введем для обозначения таких результатов понятие фольклорный тематизм. Под фольклорным мы будем иметь в виду тематизм (темы и различной степени протяженности тематически значимые элементы), образованный: цитированием народной мелодии или ее фрагментов (при любом видоизменении), либо воспроизведением какого-либо определенного фольклорного жанра в его

конкретных приметах (скажем, тип мелодии и фигура сопровождения, ритмическая формула и характерный тембр и т.д.)” (1.С.103-104).

Как и другие характерные особенности, составляющие творческий стиль Алтуняна, метро-ритмический аспект также вытекает из особенностей армянского народного и народно-профессионального творчества. Ритм – важнейший эмбрион, доминирующая конструктивная ячейка, которая заставляет произведение пульсировать, дышать. В творчестве Алтуняна получают большое распространение сложные ритмы, метро-ритмическая игра, смена симметричных и асимметричных построений. Почти во всех произведениях автора доминируют принципы асимметричного акцентирования разных долей такта, периодичность, чередуемая с апериодичностью, двудольность с трехдольностью, при этом одновременно сочетаясь с несовпадением метрических и ритмических акцентов. Широко используются полиритмические средства, такие, как и метрическая переменность в рамках небольших построений. Даже сохраняющую метрическую периодичность, которая так свойственна танцевальным жанрам, композитор старается нарушить одновременным сочетанием разноакцентируемых ритмов. Например, в поэме “Пустующая нива” для солирующих инструментов и камерного оркестра композитор контрапунктически соединил два четырехдольных народных танца: «Ծալշիլ» (“Шалахо”) и «Քոչարի» (“Кочари”), асимметрично акцентировав сильные и слабые доли использованных мелодий. В контексте данной композиции сочетание ритмических несоответствий двух танцев, динамическая пульсация ритма, становятся основными носителями идеи. Свобода высказывания, импровизационность диктуется источником гусаноашугской ветви народно-профессионального творчества. Наряду с этим, исходя из специфики произведения, в творчестве композитора нашли место характерные черты, присущие средневековой армянской монодии, а именно: степенность изложения музыкальной мысли, неквадратное строение периода, опевание одного и того же звука, орнаментальность мелодической линии. Характерной особенностью стиля Алтуняна становится принцип дифференциации музыкальной ткани, когда скрипки ведут мелодическую линию, альты же с виолончелями и контрабасами создают

ритмическое оstinato, беря на себя функцию ударных инструментов (наиболее ярко это проявляется в частности, в обработках народных танцев для струнного квартета: «Քոչարի» (“Кочари”, 1964), «Բերդ պար» (“Берд пар”, 1968).

Указанные метро-ритмические особенности непосредственно связаны с принципом формообразования. Свободное изложение музыкальной мысли, влияющее на апериодичность развития, диктует свои условия конструирования формы. В большинстве случаев композитор прибегает к свободно трактованным, развитым одночастным и трехчастным построениям, которые не поддаются точной классификации. Данный принцип формообразования примечателен для гусано-ашугского творчества. Для каждого произведения Алтунян конструирует индивидуальную форму, соответствующую содержательной сути композиции. Одновременно с этим присутствуют достаточно устойчивые признаки формообразования, и несмотря на отмеченную свободу высказывания, композиции Алтуняна всегда структурно и драматургически целостны, что достигается благодаря:

- 1) интонационно-тематическим, тональным связям (Симфониетта для струнного оркестра, 1996, “Пустующая нива”);
- 2) сквозному симфоническому развитию (Симфония, 1979);
- 3) наличию лейттемы, которая служит важным формообразующим фактором (Второй струнный квартет).

Роль полифонии в творчестве Алтуняна достаточно велика. Принципы подголосочной и имитационной полифонии широко представлены в произведениях композитора. Имитационные переклички у разных инструментов с меняющейся фактурой, динамическими сдвигами, темброво-колористическими эффектами, - в числе часто используемых композитором приемов. Полифонизированная фактура придает произведению многослойность музыкальной ткани. Значительную роль в композициях Алтуняна играет движение по горизонтали. Линеарное мышление особенно ярко выражено в медленных частях, а также в обработках духовных песнопений для разных вокально-инструментальных ансамблей. Однако ярко выраженное полифоническое развитие всегда соседствует с принципами гомофонно-гармонического письма. В области гармонического мышления автор склонен к неожиданным диссонантным созвучиям, альтерациям и высотной вариантности ступеней,

элиптическим цепочкам. Преобладают аккорды, примыкающие к квартово-квинтовой, секундово-септимовой гармонической сфере, вытекающей из особенностей ладов армянской музыки. Европейскую ладовую систему композитор обогащает национальными оборотами, используя двойственный лад с гармонической, фригийской секундой. Характерное национальное мышление заметно также в присутствии битоникальных звучаний, где предпочтение отдается замене единого тонального центра на несколько, обычно два. Происходит как бы раскачивание между двумя равнозначными по функции ступенями лада (центральной и побочными опорными ступенями).

Мы уже отмечали том факт, что Алтунян - прекрасный знаток народного творчества, и жанр обработки народных образцов занимает значительное место в творческом багаже композитора. Это та лаборатория, где оттачивался и шлифовался стиль композитора, сформировав профессиональный подход к народному первоисточнику и высокий вкус заимствования и интегрирования фольклорных образцов в собственные сочинения. В связи с этим, нам кажется целесообразным остановиться на некоторых характерных тенденциях в жанре обработок народных мелодий.

Рубен Алтунян – автор более 120 обработок, написанных в период с 1969 по 1976 годы. Большая часть из них принадлежит народным и гусано-ашугским мелодиям, более скромно представлены обработки духовных и патриотических песен. Изучая данную ветвь творчества композитора, мы руководствовались фольклорными обработками, созданными для Ансамбля песни и пляски и Ансамбля гусанской песни Армении*.

Среди обработок Алтуняна встречаются песни разных жанров: лирические, драматические, песни-монологи, обрядовые, оровелы. В каждой из них композитор стремился создать яркий неповторимый образ, многогранно раскрывая его. Создавая свадебный обряд - «Дшафпришапц» ("Тагавораговк") он хотел максимально подчеркнуть и выявить сторону свадебного обряда, сохранившегося испокон веков. В танце «Արծանիք» ("Арцванар") для ансамбля народных инструментов (без сан-

* В ансамбль народных инструментов входят: шви, три дудука, канон, сантур, каманча, уд, бас-бамбир, контрабас и доол.

тура) композитор воспал образ орла – символ эллинистической Армении**.

Или же, например, в песне «Աշուղ Շողլաւ աշուղ Քերովբեյի Վեճը» ("Ашуг Шоглау ев ашуг Керовбец веч") поднят вечный вопрос поколений, раскрываемый в диалогическом споре молодого и взрослого ашугов. Как следует из сказанного, для композитора весьма важно создание образов, которые коренятся в истории Армении и в какой-то мере раскрывают ее характерные особенности.

Три существующих принципа использования фольклора в профессиональном творчестве, о которых мы говорили ранее, здесь одинаково важны. Первый принцип – цитирование, используется композитором достаточно широко и касается, в основном, песенно-мелодического начала. Вокальный материал народной песни цитируется без изменений. Примером этого типа являются обработки песен «Քանի Վուր ջանմ» ("Кани вур джаним"), «Թիգուզ քու քաշին մարդրիտ տան» ("Тикуз ку кащин маркрут тан") Саят-Новы, сюита «Թագվորացով» ("Тагавораговк") на материале народных песен. Естественно, композитором обычно вносятся незначительные корректировки, которые ни в коем случае не препятствуют развитию мелодии, и не изменяют основной мелодический мотив. Следующие два принципа – свободное развитие и стилизация – также нашли место в обработках Алтуняна. Отмечая этот факт, следует обратить внимание на то, что они почти всегда сосуществуют и неразрывно между собой связаны. Разработка мелодико-тематического зерна приводит к сочинению совершенно нового музыкального материала, который, утрачивая непосредственную связь с первоисточником, в то же самое время все еще является ее неотъемлемой частью. Такой принцип доминирует в инструментальных произведениях, в частности, в обработках для ансамбля народных инструментов: «Արծանիք» ("Арцванар"), «Շալախ» ("Шалахо"), так же в инструментальных вступлениях и заключениях к песням «Զեփյուր քարեւ տար» ("Зепюр, барев тар") Аваси, «Թիգուզ քու քաշին մարդրիտ տան» ("Тикуз ку кащин маркрут тан") Саят-Новы и т.д. Часто встречаются случаи, когда композитор сам сочиняет инстру-

** Каменная статуэтка орла, сохранившаяся со времен эллинистической Армении, была увидена композитором в Эрмитаже Санкт-Петербурга.

ментальное обрамление к народному первоисточнику. Показательным примером сочетания двух принципов является свадебный обряд «Թագօվրագով» ("Тагаворагов"), построенный по принципу сюитного - чередовании контрастных номеров, которые настолько органично вытекают друг из друга, что создается впечатление естественно развивающегося музыкально-сценического действия.

Второй принцип - коренная разработка, наиболее выражен, как уже отмечалось, в обработках для инструментального состава. Большой интерес с этой точки зрения представляют Вариации на тему народного танца «Շալախ» ("Шалах"), обработанного для ансамбля народных инструментов, где музыкальный материал танца настолько искусно преломлен через композиторское восприятие, его индивидуальный почерк, что мелодия танца растворяется в общем полифоническом развитии.

В вокальных обработках Алтуняна, как правило, имеются три основных действующих лица: солист, вокал (ансамбль или хор) и инструментарий, которые неразрывно между собой связаны. Развивая главную музыкальную мысль, они взаимодействуют друг с другом, и возникает несколько параллельных диалогов: между солистами и хором, солистом и инструментальным ансамблем, наконец, между общим вокальным составом и инструментальным. Солист выражает основную идею, хор же, подхватывая, ее обобщает. Исходя из этого, в обработках Алтуняна ярко выделяются два основных вида пения: респонсорное – в виде диалога («Ինչ կոնմ էկմն» ("Инч коним экимн") Саят-Нова, народная - «Աղանդի ողբը» /«Аданау вохп/»), и антифонное - поочередное исполнение солистом и вокальным ансамблем («Սասունաշը» /«Сасунасар/» Дживани). Существует еще один принцип, который примыкает ко второму. Это наличие запева, звучащего с уст солиста, впоследствии постепенно подхватываемого разными группами хора («Շաղը ծաղկեցա՛» ("Цар цахкецев"), «Թագօվրի մեր» ("Тагавор мер") и т.д.). Принцип выбора одного из указанных видов музыкального исполнения и драматургии диктует содержание самой песни, и что важно, композитор всячески избегает музыкальных штампов и находит для каждой песни индивидуальное исполнительское решение.

Инструменты в ансамбле берут на себя функцию сопровож-

дения. В основном, они не персонифицированы, исключение составляют отдельные случаи. Например, свирель в песне «Սասունաշը» ("Сасунасар") имитирует пение птиц, дудук в большинстве случаев привносит трагическое начало – «Բլրուկի հիդ» ("Блбули хум") Саят-Нова. Здесь также уместно отметить два образца обработок, где композитор, используя весь инструментальный состав, уподобляет его звучанию отдельного инструмента. Эта обработка песни, сохранившейся с XVIII века «Աշուգ Շոգլաւ և աշուգ Կերօվես վեշ» ("Ашуг Шоглау ев ашуг Керовбен вече"), где звучание ансамбля народных инструментов превращается в большой саз (в инструментальном ансамбле отсутствуют шви и каманча), а в танце Нерсеса Шнорали «Նոր ծաղկի» ("Нор цахик", - шви, дудук, бас-бамбир, контрабас) максимально ощущается звучание органа. Отметим и то, что этот принцип композитором употребляется и в обработке танца «Բերդ պար» ("Берд-пар") для струнного квартета*.

Интересно и то, как решает Алтунян проблему ритма, ведь не секрет, что ритм наравне с мелодией играет основополагающую роль в народной музыке. Одним из важнейших принципов для Алтуняна является выработанный им метод, который распространяется почти на все обработанные композитором народные мелодии. Три инструмента в ансамбле – уд, канон и контрабас берут на себя функцию ритма, точнее говоря, они воспроизводят ритмическую пульсацию песни или танца. Таким образом достигается гармоническое сочетание мелодического и ритмического начал, тем самым образуя сложную, но одновременно стройную драматургическую линию развития. Своеобразно также решена функция дама у дудука, что является обязательным атрибутом армянского ансамблевого исполнения. В инструментальном ансамбле у Алтуняна задействованы три дудука: средний берет на себя функцию дама, но это - подвижный, полифонизированный дам, ибо только в очень редких случаях он остается неподвижной звуковой опорой.

В основе алтуняновских обработок лежит мажоро-минорная система, естественно, в органичном сочетании с особенностями армянской ладо-интонационной организации. Компози-

* Струнный квартет имитирует звучание волынки.

тор широко использует здесь полифонический принцип развития, в частности, виды подголосочной полифонии - «Ձեփյուր բարեւ տար» ("Зепюр, барев тар") гусана Аваси, «Նոր ծաղիկ» ("Нор цахик") Шнорали, имитационной полифонии - «Շալախոն» ("Шалахо"), а в свадебном обряде «Թագորագովք» ("Тагвораговк") органично сочетаются эти два фактурных типа. Вместе с тем, Алтунян нередко прибегает к гомофонно-гармоническому принципу письма - «Առ նազելի» ("Ар Назели") Дживани, «Թիզուզ քու քաշին մարքուս տան» ("Тикуз ку кашин марким тан") Саят-Новы.

Резюмируя заметим, что жанр обработки народных мелодий является одним из важнейших в творчестве композитора. Прониквшись гениальностью народной песни, Алтунян сохранил важнейшие ее особенности: мелодико-ритмическое богатство, ладо-гармоническую и интонационную сферу, ее музыкально-художественный образ, а также присущий народному творчеству синcretизм средств выразительности. Таким именно образом народные песни и танцы были достойно представлены слушательской аудитории в современных концертных залах разных стран. Основываясь на многолетнем творческом опыте своих предшественников, и, конечно Татула Алтуяна, (1901-1973) - патриарха народной песни, основателя Ансамбля песни и пляски (1938), Государственной хоровой капеллы* (1937) и Хорового общества Армении (1966), практически он не повторил путь отца, избрав свою творческую дорогу.

В заключение вновь подчеркнем, что Рубен Алтунян принадлежит к числу тех современных композиторов, которые имеют ярко выраженное национальное мышление и категория фольклора есть основа его творческого *credo*. Воплощение национального начала через фольклорный материал и инструментарий не мешают композитору создавать произведения, отвечающие духу времени.

Примечания:

1. Головинский Г., Композитор и фольклор: Из опыта мастеров XIX – XX вв., Москва, 1981.

* Ныне - Государственная академическая хоровая капелла Армении.

2. Особенности взаимосвязи фольклора и профессионального творчества на примере национальной музыки находятся в центре внимания и армянских музыколов, в частности Зурабян Ж.: Յայ գործիքային երաժշտության որոշ գծեր. Սովետական արվեստ, Երեւան, 1981 թ.11. Ֆուլկորի ներթափանցման հատկանիշները 1950-քր. հայ գործիքային երաժշտության մեջ. Երեվան 1987; Фольклорные пласти в тематизме Первой симфонии Джигана Тер-Татевояна. Сборник музыковедческих трудов, Ереван, 2000, N1. и др.

3. Подробнее о закономерностях новых явлений данного периода см. в кн: Саркисян С., Вопросы современной армянской музыки (60-е годы), Ереван, 1983.

4. Тер-Симонян М., Камерно-инструментальная ансамблевая музыка Армении, Ереван 1974.

5. Берко М., // Коммунист, 18 июня 1963.

6. Тер-Оганезова И., // Коммунист, 5 декабря 1967.

7. Шахназарова Н., Национальная традиция и композиторское творчество, / Музыкальная культура Армянской ССР (сост.М. Берко) Москва, 1985.

Vera Zalyan

Folk Sources of the Music by Ruben Altunyan

Summary

The article is dedicated to the study of folk music in the creative work of Armenian composer R. Altunyan (b. 1939). The author of the article considers features of the themes, metric, rhythmic and modal regularities as well as constructive aspects of the composer's music.

ՄԱՐԻՆԵ ԷՔԻԶՅԱՆ

«ԴԱՎԻԿ» ՏԱՐՁ ՀԱՅ ԿՈՄՊԱԶԻՏՈՒՆԵՐԻ ՍՏԵՂԾՎԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այսօր, երբ միջնադարյան հոգևոր երգարվեստը հայ մշակութային կյանքի անբաժանելի մասն է դարձել, դժվար է պատկերացնել, որ ազգային այդ ժառանգությունը, խորհրդային իշխանության քաղաքական գաղափարախոսության պայմաններում, շուրջ կես դար մոռացության էր մատնվել: Այդ շերտերին դիմելը հայ կոմպոզիտորական արվեստում չէր խրախուսվում, և առաջններից մեկը, ով համարձակվեց քանդել «գորոյան հանգույցը», Յարո Ստեփանյանն էր: Ներևան 30-40-ականներին կոմպոզիտորն իր երգերում և ռոմանսներում, իսկ 1944-ին նաև առաջին սիմֆոնիայում անդրադավ հայ հոգևոր երգարվեստին՝ իր ստեղծագործությունների երաժշտական նյութը քաղելով շարականներից: 50-ականներին այս գիծը շարունակեցին Է. Հովհաննիսյանը (առաջին սիմֆոնիայում) և Ա.Փիրունովը (Երկորրդ կվարտետում)` օգտագործելով «Հավիկ» տաղը: Եթե նման փորձերը այդ տարիներին մասնակի բնույթ էին կրում՝ կապված ավելի շուտ կոմպոզիտորի անհատական նախասիրությունների հետ, ապա որպես գեղագիտական ամբողջական գործընթաց, միջնադարի նկատմամբ ակտիվ վերաբերմունք դրսևը 60-ականների բարոյա-հոգեբանական մշակութային մթնոլորտում որպես ազգայինի արտահայտման նոր մակարդակ: Դրա առաջին վառ արտահայտությունը եղան S.Մանսուրյանի «Հայուններ» վրկալ շարքը (խոսք՝ Նահապետ Քուչակի) և «Տետր ողբագին տաղերգության» վոկալ-գործիքային շարքը (խոսք՝ Նահապետ Քուչակի և Խաչատուր Կեչառեցու), Ա.Աճեմյանի «Լսոներ» վոկալ-գործիքային շարքը (խոսք՝ Հովհաննես Թլկուրանցու), Լ.Աստվածատրյանի «Հավիկ» Պրոյեկտ, Ս.Աղաջանյանի «Պոյի ինոնոդիաներոց»: Հետագա

* Հայ կոմպոզիտորների 60-70-ական թվականների վլուալ-կամերային ստեղծագործություններում միջնադարյան արվեստի հանդեպ աստիճանաբար աճող հետաքրքրության նկատմանը առաջիններից մեկը նշել է Ս.Ասրույնը (1.):

տարիներին միջնադարյան երաժշտության ժանրերին դիմեցին հայ կոնպոզիտորներից շատերը՝ Գ.Արմենյանը, Ռ.Աթայանը, Է.Արիստակեսյանը, Մ.Իսրայելյանը, Մ.Դովիաննիսյանը, Ե.Երկանյանը, Է.Սադոյանը, Վ.Մանուկյանը և այլոք:

Միջնադարյան արվեստն իր համանարդկային արժեքներով, բարոյագիտական բարձր գաղափարախոսությամբ, հստակ ու կայուն ձևերով, գուսապ ու վեհ հնչողությամբ իր հետ բերեց նոր հնարավորություններ: Այս հիմքի վրա գրված ստեղծագործությունները հարստացնում են կոմպոզիտորների ինքնարտահայտման եղանակները, ընդարձակում ստեղծագործությունների ոճական ու ժամրային շրջանակները, ձայնակարգային ներդաշնակ հիմքը, խորացնում գծային (լինեար) նտածելակերպը: Պատահական չէ, որ ստեղծագործական ոլորտում ազգային ժառանգության այդ ինքնատիպ շերտերի հանրեալ հետաքրքրությունը առ այսօր ոչ միայն չի նվազել, այլև ավելի է խորացել՝ ունենալով նորանոր ձեռքբերումներ:

Հայ երաժշտագետները, անշուշտ, անդրադարձել են միջնադարյան արվեստի զարթոնքին, բայց հիմնականում միջնորդավորված ձևով կապված հեղինակների հետազոտական նյութի հետ (Ն.Թահ-միզյան, Ս.Սարգսյան, Ա.Բարսամյան, Ա.Գրիգորյան, Ժ.Չուրաբյան և ուրիշներ): Այս երևույթն ավելի հանգանանալի ուսումնասիրել են Ռ.Աթայանը և Ա. Արևշատյանը (2.):

Ներկա աշխատանքը ևս միջնադարյան մոնողիայի* ներթափանցման հարցերի ուսումնասիրության մի փորձ է հայ կոմպոզիտորական արվեստի մեջ։ Սյուրի ծավալայնությունից ելնելով՝ սահմանափակվում ենք «Հավիկ» տաղի օրինակով, որը առավել հաճախ է եղել հայ կոմպոզիտորների ուշադրության կենտրոնում և բացի այդ հայ կոմպոզիտորական արվեստում հիգնոր մոնողիայի օգտագործման առաջին նմուշներից է։

* Кушнарев Х. Вопросы истории и теории армянской монодической музыки. Москва, 1958.

Համաձայն Բուշնարյանի և Գալիցկայայի՝ մոնողիան իր կոնպոգիցին ամբողջ-կանությամբ ի սկզբանե միաձայն և բազմաձայնություն չպահանջող ստեղծագործություն է:

* * *

Տաղային արվեստը ծևավորվել է 10-11-րդ դարերում*: Ի սկզբա-
նե գուսանական երաժշտա-քանաստեղծական այս տեսակի կրո-
նական միջավայր՝ այսինքն գրավոր արվեստ ներթափանցման
հարցում անգնահատելի է Գրիգոր Նարեկացու դերը: Գրականա-
գետ Վաչե Նալբանդյանի բնորոշմամբ, «Գրիգոր Նարեկացին նորո-
վի մեկնարանեց ու իմաստավորեց կրոնական հայտնի թենաները և
համարձակորեն փշունով հոգևոր պոեզիայի քարացած ծևերն ու
ավանդական շաբլոնը՝ քերթողական արվեստը դուրս բերեց իսկա-
կան քանաստեղծական ներշնչանքի զարմանահրաշ աշխարհը...»
(6. էջ 58):

Գրիգոր Նարեկացուց մեզ հասած մի քանի տաղերի թվում հա-
ճախ նշվում է նաև «Հավիկ» տաղը: Այնուամենայնիվ, գրականա-
գետները միասնական չեն այս տաղի հեղինակային պատկանելիու-
թյան հարցում: Այսպես, ակադեմիկոս Ասատրու Մնացականյանը
